



«ԱԶԴԱԿ» ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՇԱԲԱԹ, 6 ՓԵՏՐՈՒՄ 2016

ԴՊՐՈՑՆ ՈՒ ԻՐ ԲԱՅ ԴՈՆԵՐԸ

Աւանդութեան վերածուելու ընթացքին մէջ է լիբանանահայ գաղութի հասարակական-մշակութային կեանքին մէջ դրոշմ ձգած, ակօս բացած եւ այդպիսով սերունդներու հոգեմտաւոր կազմաւորման գործին մէջ նկատառելի լուծումներ դրած գործիչներու յիշատակին «Ազդակ»-ի յաւելուած հրատարակելը:

Մամուլէն ակնկալուած վերաբերումի իւրօրինակ ձեւ է այս մէկը՝ հանդէպ այն նուիրեալներուն, որոնք ապրեցան ու ստեղծագործեցին՝ հայ գրականութիւնը, կրթութիւնը, ազգային-քաղաքական կեանքն ու մշակոյթը գերակայ ուղղութիւն համարելով իրենց կեանքին:

Վարուժան Խտըշեան անկասկած այդ պատւանդանին վրայ կանգնելու արժանիներէն է, որ համակ կեանք մը ապրեցաւ Յայ Թատրոնին համար:

Եւ եթէ կ'ընդունինք դասական այն տեսութիւնը, որ թատրոնը դպրոց է, ուրեմն Վարուժանը այդ դպրոցին ոչ միայն սպասարկուն էր, ուսուցիչը, տնօրէնը եւ աշակերտներ դաստիարակողը, այլ գուցէ եւ աւելին՝ լիբանանահայ թատերական դպրոցի գլխաւոր կերտիչներէն մէկը:

Համաշխարհային թատրոնի հայացումը յատկանշեց Վարուժան Խտըշեանի արուեստը, որ հայ ժողովուրդին հասանելի դարձուց միջազգային թատերագիտութեան ամենանշանաւոր գործերը՝ լիբանանահայ թատրոնի հանդիսատեսին ապահովելով արուեստի բարձրորակ կատարումի վայելքը: Եւ լիբանանահայ թատերասերը Վարուժանի բեմադրածներուն մէջ տեսաւ նաեւ արեւմտահայերէն լեզուի թատերական օգտագործումը, առօրեականութիւնը, շեշտերը, շարժումները, բեմի կահաւորման իւրայատկութիւնը, դերասանական բնական խաղարկութեան փայլուն օրինակները:

«Թատրոն 67»-ի սերունդը եւ հետագային Համազգայինի տղաքը հաւանաբար մասնագիտական ուսման հետեւելով արհեստավարժ դերասաններ չէին: Անոնք փարած էին հայ թատրոնին կիրքով, խանդաղատանքով, նուիրումով՝ մասնաւոր եւ իրաւամբ աչքի կ'իյնային փայլուն կատարողականութեամբ: Իւրայատուկ արհեստավարժութեամբ մը օժտուած էին անոնք, որոնց ականատեսը կը զգար Վարուժան Խտըշեանի դպրոցին փոխանցած շունչը:

Խտըշեան, սակայն, միայն լիբանանահայ կամ ընդհանրապէս սփիւռքահայ թատերական արուեստի սահմաններուն մէջ չէր փակուած: Հայրենի թատերական աշխարհը՝ հսկանքով, Մեծ Վարպետներով, թէ խստապահանջ թատերասերներով բարձր կը գնահատէր եւ կը շարունակէ գնահատել իր արուեստը:


Թատրոնը դպրոց է, այո՛: Իսկ դպրոցին դռները միշտ բաց պէտք է մնան, որպէսզի արտադրեն նորերը եւ նորոգեն կեանքը: Լիբանանահայ թատրոնը լիբանանահայ դպրոց է, որուն դիմագիծի կերտման գլխաւոր դերակատարներէն է Վարուժան Խտըշեան: Այդ դպրոցին դռները պէտք է շարունակեն ընդունիլ նորերը:

Ա.

ԱՆՄԱՐ ԱՍՏՂ ՄԸ. ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏՈՇԵԱՆ

Վարուժան Խտըշեանը մաս կը կազմէ հոյլին այն աստղերուն, որոնք լուսաւորած են Յայ Բեմը եւ 2015-ի վերջին օրերուն, Դուրեանի բառերով, գնաց աւելնալու երկինքի հայկական աստղերուն եւ հոն մնալու իբրեւ լուսաշող յիշատակ: Անոր երեւումը տեղի ունեցաւ անցեալ դարու 60-ական տարիներուն, սկսեցը տեսնել շուրջ կէս դար, ապրեցաւ վերիվայրումներ, սակայն իր անվիճելի պատուանդանը հաստատեց մեր արուեստի նորագոյն պատմութեան մէջ:

Համազգայինի թատերախումբին ամենէն տաղանդաւոր «արտադրութիւններէն» էր, որ աւարտելէ ետք



Ժորժ Սարգիսեանի «դպրոցը», գնաց Լոնտոն ու վարակուեցաւ դարու թատերական կեանքի Որակով ու Արդիով: Պէյրուս վերադարձաւ իբրեւ յանդուգն եւ ազնիւ արկածախնդիր, յեղափոխականի խմորումով. պահ մը վերամիացաւ «Լեւոն Շանթ» թատերախումբին, յետոյ կազմեց իր թատերախումբը՝ «Թատրոն 67», որ եղաւ ու երկար ատեն մնաց հայ արդի թատրոնի դպրոց մը՝ անմոռանալի նուաճումներ արձանագրելով՝ առնուազն մինչեւ 1975-76 տարիները, երբ Լիբանանի

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 12

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՎԱՐՈՒԺԱՆՍ

Յունական հիւանդանոց, 1980 թուական:

Երբ Վարուժանը աչքերը բացեց ոտքը կորսնցնելուց յետոյ, Աստուծոմէ խնդրեց, որ կին արարածը իրանից՝ կռնակ չդարձնի: Եւ ճիշդ մէկ տարի անց նոյն օրը՝ 3 օգոստոս 1981-ին, Վարուժանը հանդիպեց ինձ, եւ ճակատագրական եղաւ թէ՛ իր եւ թէ՛ իմ կեանքում: Մեր՝ առաջին նայուածքից, սեր, որ դիմացաւ 34 տարի: Շատ անգամ գիտակցաբար, շատ անգամ անգիտակցաբար ես իր մեծութեան առաջ միշտ խոնարհուում էի... տեղի էի տալիս ամենաբարձր իրավիճակներում՝ ֆիզիքական թէ հոգեկան: Ինձի հանդիպելուց յետոյ, երբ Վարուժանը վերադառնալով Պէյրուս՝ շարունակեց բուժումները, դարձեալ խումբ կազմեց եւ մի ժամանակ ետք վերադարձաւ բեմ՝ բեմադրելով «Հանրային պարտեզի մէջ բոպիկ»-ը, դա իր վերածնունդն էր... Մինչ այդ մենք միշտ սիրոյ նամակագրութեան մէջ էինք, ինքը՝ ինձ, ես՝ իրեն: Մի օր իրեն գրեցի. «Վարուժան, նախքան արեւին եւ դու կը տեսնես ինձ, չէ՞ որ ես էլ եմ եղ տեսնում... արեւը միակն է, որ մենք երկուսս էլ ենք տեսնում, որ միացնում է մեզ...»: Եւ Վարուժանը սկսաւ նայել արեւին... ու երագել... Յետոյ խոստովանեց, որ շատ էր սիրել էր միտքս:

Վարուժանը շատ դժուար մարդ էր, որովհետեւ մեծ արուեստագետ էր, բոլոր մեծ արուեստագետները պատմութեան մէջ միշտ էլ եղել են բարդ եւ տարօրինակ:

1983 թուին Երեւանում, Վարուժանի պատւերով, յայտնի նկարիչ Վիգէն Թադեւոսեանը

գծեց իմ դիմանկարը: Մի քանի օրից նկարը պատրաստ էր: Նկարը ծածկուած էր մի ճերմակ կտորով, երբ նկարիչը կտորը քաշեց, վար առաւ, Վարուժանը տեսնելով պատկերը՝ յուզւեց ու լացեց: Ես զարմանքով հարց տուեցի իրեն, թէ ինչո՞ւ յուզուում էր, չէ՞ որ այդ նկարը շատ նման չէր ինձ: Պատասխանեց. «Ես աչքերի մէջ եւ դեմքի վրայ տեսայ այն տիպոսութիւնը, տառապանքը, կարօտը, որ դու կ'ապրես, երբ ես Պէյրուսում եմ, ես այդ պատկերի մէջ քո ներքին աշխարհը տեսայ, Ամօելա՛»: Եւ ես հիմա կ'ասեմ. «Վարուժան, ամեն մարդու տրուած չէ եղպէս տեսնելու կարողութիւն»: Վարուժանը տեսնել գիտէր, իւրայատուկ աչքով՝ իսկական արուեստագետ էր:

Մի օր Վարուժանը չկարողացաւ ներկայ գտնուել հորաքրոջս երգահանդէսի ներկայացմանը, որը Հայաստանի անուանի ժողովրդական արուեստագետ էր, երգչուհի: Վարուժանը եկաւ մեր տունը մի քանի ծաղկեփնջեր շալկած, նստաւ պատշգամբում՝ սպասելով հորաքրոջս վերադարձին: Երբ մեքենան կանգ առաւ շէնքի առաջ եւ հորաքրոջս ուղղուեց դէպի մուտք, Վարուժանը բացագանչելով՝ ծաղիկները երկրորդ յարկից նետեց վար: Խենթութիւն էր... թերեւս, բայց մենք բոլորս մնացինք ապշած, Էնքան գեղեցիկ էր պահը, Վարուժանն էր՝ իր իւրայատուկ եւ տարբեր աշխարհով:

ԱՆԺԵԼԱ ԽՏՈՇԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 10

ՏԱՐԵՐՔԻ ՄԱՐԴԸ

Վարո՛ւժ ջան,

Յուզարկաւորութիւնդ չեղաւ այնպէս, ինչպէս դուն կ'երագէիր. չէր ալ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ մեր բարոյական ըմբռնումները նման բան մը կրնային թոյլատրել եւ ո՛չ ալ թատերախումբդ գոյութիւն ունի իրագործելու համար զայն: Իրականութեան մէջ քու պատկերացումդ իբրեւ յղացք կրնայ ըլլալ անհեթեթ թատրոնի բացառիկ նմուշ



Ձախէն աջ Մովսէս Զերկելեան, Սոս Սարգսեան, Վարուժան Խտըշեան, ընկեր մը

մը, որ կարելի է նոյնիսկ ժապաւենի վերածել: Բոլոր պարագաներուն պարտականութիւնս կը կատարեմ եւ գրի կ'առնեմ զայն... ապագային համար: Չե՛ս գիտեր, ժամանակի ընթացքին աշխարհը աւելի ազատամիտ կրնայ դառնալ, բարոյական կապանքները կը քակուին եւ գուցէ հնարաւոր ըլլայ նման վրանբաց ներկայացում մը բեմադրել: Վստահ եմ, որ ժան ժընէի նման արտակերպութիւնը թատերագիր մը պիտի չվարանէր բեմագրութիւնը գրելու, եւ Փարանջանովի նման զարտուղի արուեստագետ մըն ալ հաճոյքով պիտի բեմադրէր զայն... քո՛ւ յիշատակիդ: Այս հարցը ժամանակի դատաստանին վստահելէ ետք տեղեկացնեմ, որ թաղմանդ ընթացքին արտակարգ ոչինչ պատահեցաւ, եթէ չհաշուենք Մունիր Զեւրուանիի արաբերէնով արտասանած շնորհալից դամբանականը: Յամենայն դէպս գնահատանքն ու մեծարանքը արուեստիդ ու անձիդ հանդէպ տիրական էր: Զայ թէ օտար երկրպագուներդ՝ գրեթէ բոլորն ալ ներկայ էին յուզարկաւորութեան: Անոնցմէ իւրաքանչիւրը յուշ մը, դուռագ մը, պատմելիք բան մը ունէր կեանքեդ: Զպարտ էին նոյնիսկ անոնք, որոնք քեզ միայն ճանչցած ու խօսած էին հետդ: Ի դէպ Պօղոսն (Գասապեան) ալ հոն էր: Ինչե՛ր-ինչե՛ր յիշեցիք Զայաստանի մեր կեանքէն: Որսորդական մեր արշաւներն ու

անոնց յաջորդած խրախճանքները, մշակութային հարուստ կեանքն ու թատերական ելոյթները: Ի՞նչ հրաշալի ընկեր-ընկերուիկներ ունէիք հոն՝ հայրենիքի մէջ: Սոս Սարգսեանն ու Մուշեղ Գալշոյեանը, Յակոբ Յակոբեանն ու Արտաշէս Յունանեանը, Ալպերթ Կոստանեանն ու Ռազմիկ Դաւոյեանը, Զրանդ Մաթեոսեանն ու Ռուբէն Յովսէփեանը, Վարդուիի Վարդերեսեանն ու Աննա Պետրոսեանը, Լեւոն Թուխիկեանն ու Վովա Մըրեանը, Յասմիկն ու Նարինէն, Անահիտն ու Ալիքը, Ալիսն ու միւս Ալիքը, Ֆրունզիկն ու Գուժ Մանուկեանը, Յարութն ու Թամարը, Ռուբէն Զախվերդեանն ու Պետրոս Ապաճեանը, Սէյրան Խաթամաճեանն ու Վիգէն Թադէոսեանը, Զենրիկ Էդոյեանն ու Յակոբ Մովսէսը եւ դեռ շա՛տ շատեր: Ո՛ր մէկը թուեմ, սիրելի՛ Վարուժ:

Ի՞նչ մեղքս պահեմ, հակառակ ազգային գետնի վրայ խորհրդային որոշ ճնշումներուն, ուրախ էիք մենք: Լաւ օրեր էին, երկրի տնտեսութիւնն ու մանաւանդ մշակոյթը ծաղկման ու բարգաւաճման մէջ էր այդ օրերուն: Թէեւ կային խոչընդոտներ, սակայն կային

նաեւ Ռոմեն Գոգմոյեանի եւ կամ Ճոն Կիրակոսեանի նման հայրենասէր դեկավարներ, որոնք ուղղութիւն կու տային մեզի:

Կը յիշես, չե՞, որքան արշաւներ կը կազմակերպէիք նաեւ դէպի Զայաստանի տեսարժան վայրերն ու յուշարձանները: Մանաւանդ մէկը երբեք պիտի չմոռնամ: Նստած էիք աւանդական դարձած օդի սեղանիդ շուրջ, յանկարծ Սօսը յանպատրաստից հեռաձայնեց իր ընկերոջ՝ Արագածոտնի շրջանի Ռայկոմի քարտուղարին, պարզապէս երթալ Բաշ Ապարան՝ ստուգելու համար յուշարձանի վերանորոգումը: Յուրտ էր, ձիւն-ձմեռ, բուք ու բորան՝ պիտի ըսէին Բաշ Ապարանի ճակատամարտին մասնակցած ֆետայիները: Մենք զացիք: Վերանորոգումը սկսած էր, սակայն չէր աւարտած, Սօսը պահանջեց չսպասել մինչեւ գարնանամուտ, մինչեւ ձիւնհալ, որովհետեւ շէշտեց, թէ Բաշ Ապարանի ճակատամարտը նուազ կարեւոր եւ ճակատագրական չէր, քան Սարդարապատը:

Այդպէս էր Սօսը, իսկ դո՛ւն...

Դուն ալ տարե՛րքի մարդ էիր, Վարուժ, եւ պատահական չէ, որ դուն եւ Սօսը ձեր արիւնները իրարու խառնեցիք ու եղբայրացաք...

Լա՛ւ յիշէ, Վարուժ: Զաղաքացիական պատերազմի դաժան օրեր էին: Կ'ապրէիք Մար Մըխայել՝ նոյն շէնքը, դուն՝ հինգերորդ, ես՝ առաջին յարկը, որ համեմատաբար նուազ վտանգաւոր կը համարուէր: Այդ օր ռմբակոծումները սովորականէն աւելի սկսան սաստկանալ: Պետիկը քովդ էր, ո՛չ Անժելային թախանձանքները, եւ ո՛չ ալ իմ յորդորներս կրցան վար իջեցնել ձեզ: Ստիպ-



«Տարերքի մարդը», գործ՝ Վիգէն Թադէոսեանի

ւած՝ վեր ելայ, նստած էիք պատշգամբ, «անխուսափելի» ուխքիի գաւաթներուն դիմաց: Չայրացած էիր դուն, աչքերդ կարմրած, մազերդ ցաքուցրիւ տնկուած, կատղած առիւծի կը նմանէիր: Գերլարուած այդ վիճակդ ծանօթ էր մեզի Զայաս-



Ձախէն աջ Վարուժան Խտըշեան, Ալպերթ Կոստանեան եւ Մովսէս Զերկելեան

տանէն: Վիգէն Թադէոսեանը նոյն տարերքիդ մէջ բացառիկ յաջողութեամբ պատկերած է քեզ: Այդ դիմանկարը մասունքի մը նման կը պահեմ, դուն էապէս այդպէս էիր, տարերային: Այդ Վարուժանը քիչեր կը ճանչնան: Չարմացած էիր, թէ ինչպէ՛ս կ'ըլլայ, երբ կեանքը այսքան գեղեցիկ է, այս հրաշալի աշխարհին մէջ, արուեստ կայ, թատրոն կայ, կին ու գինի կայ մանաւանդ, այդ ինչպէ՛ս կ'ըլլայ, որ յանկարծ մարդիկ որոշեն գիրար սպաննել ու անմեղներուն գլխուն ռումբեր թափել:

Սօսեցայ ու ըսի.

- Ի՞նչ ընենք, Վարուժ, կ'ապրինք absurd (անհեթեթ) ժամանակներու մէջ...

- Կ'ապրինք absurd ուղեղներու մէջ:

Անմիջապէս սրբագրեցիր դուն, սակայն Պետիկը աւելցուց.

- Ինչո՞ւ կը զարմանաք, կեանքը ի սկզբանէ էր absurd, ի՞նչ է, նորութի՞ւն է պատերազմը:

- Պետիկը ճիշդ է, ռումբը կու գայ ու կ'անցնի, բայց մենք կը մնանք, նոյնիսկ եթէ ռումբը մեզ սպաննէ: Եթէ դուն ալ քանի մը գաւաթ ուխքի խմես մեզի պէս, ապա այն ատեն վար իջնելը աւելորդ շռայլութիւն պիտի համարես ու ռումբէն պիտի չվախնաս: Եթէ ռումբը գայ, ապա նոյնիսկ դրանդ առջեւ կու գայ ու ոտքդ կը կտրէ, խուսա-



Ձախէն երրորդը Սոս Սարգսեան, կեդրոնը Վարդուիի Վարդերեսեան, աջին Մովսէս Զերկելեան, ձախին Վարուժան Խտըշեան շրջապատուած դերասան-դերասանուհիներով

փուլմ չկայ, նստե՛ ու գաւաթ մը խմե՛ հիմա:

Կտրուած ոտքդ երկարելով՝ աւելցուցիր.

- Ապսիւրտը այս է, անիմաստ ու անտրամաբանական: Իմ ոտքս ի՞նչ կապ ունի աշխարհին հետ, Լիբանանի պատերազմին հետ, թատրոնին հետ, նստե՛ ու ձայնդ մի՛ հաներ:

Ընթացքին ռուբ մը սուրաց ու փշուրեցաւ հանդիպակած թաղին մէջ: Ես ի զուր տեղը բացատրեցի, թէ փիլիսոփայելու տեղն ու ժամանակը չէ հիմա, ի զուր Անժելան կը փորձէր համոզել քեզ: Ստիպուած՝ ես եւս մնացի ձեզի հետ, մինչեւ որ ռուբերուն ձայները հեռացան...

Այո՛, Վարուժ, տարերքի մարդն էիր դուն, ստեղծեցիր տարերքի թատրոնը, տարերայնօրէն կերտեցիր կերպարներ, որոնք ընդհանրապէս զարտուղի՝ մտապէս զարնուած կամ հոգեպէս խախտած տիպարներ էին, որոնք հոգեկան աշխարհն ու տազնապները բնագոյաբար կ'ապրէիր թէ՛ իբրեւ բեմադրիչ եւ թէ մանաւանդ իբրեւ դերասան: Ի զուր չէ, որ Պետիկը քեզի կ'ըսէր՝ «Անասունի բնագոյ ունիս», եւ դուն ճիշդ կը հասկընայիր զինք...

Սիրելի՛ Վարուժ, մենք բոլորս ալ գիտէինք, որ մինչեւ վերջ չկրցար համակերպիլ ոտքիդ կորուստին հետ: Տառապեցար ու տանջահար եղար



Տիգրան Մանսուրեանի հետ

յատկապէս վերջին տարիներուդ, երբ գամուած մնացիր անկողնին: Սակայն խոստովանե՛, որ բախտաւոր եղար Անժելայով: Այս պահապան հրեշտակը, որ գիտցաւ հաւատարիմ մնալ սիրոյ խոստումին, գիտցաւ գնահատել անձդ եւ նոյնի՛սկ զարտուղի բնաւորութիւնդ. ամենայն համբերութեամբ տոկաց ու տարաւ ամէն ինչ, բարի պարիկի նման կողքիդ մնաց եւ խնամեց քեզ մինչեւ վերջին շունչ, նոյնի՛սկ պատրաստ՝ զոհելու իր ասպարէզն ու արուեստը: Հակառակ անոր որ Անժելան հրաշալի դաշնակահար էր, ան աւելի ուժ տուաւ քու թատերական արուեստիդ, մնաց կողքիդ, ո՛չ միայն իբրեւ կողակից, այլեւ՝ իբրեւ նաեւ գործընկեր ու սրտակից:

Դուն՝ իբրեւ թատերական արուեստի ռահվիրայ, կը մնաս հայ թատրոնի պատմութեան մէջ, քու արժանաւոր պատուանդանին վրայ: Ես ո՛չ միայն հպարտ եմ քեզմով, քու արուեստովդ, այլ նաեւ շնորհակալ՝ քեզի, անոր համար, որ թատրոնի հմայքն ու էութիւնը սկսած եմ ճանչնալ քու բեմադրութիւններէդ՝ Պուրճ Համուտի «Յ. Տէր Մելքոնեան»-ի բեմէն:

ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ

1992-ին Այնճարի Գալուստ Կիւպէնկեան երկրորդական վարժարանի մուտքին Պետիկ Հերկելեանի բարձրաքանդակը (գործ՝ Մկրտիչ Մազմանեանի) գետեղուեցաւ՝ ի յիշատակ վաղամեռիկ բանաստեղծին: Այս առիթով հրաւիրուած էր նաեւ Վարուժան Խտըշեանը, ուր արտասանեց իր սրտի խօսքը, որ ամբողջութեամբ կու տանք ստորեւ:

Ինձմէ խնդրուեցաւ, որ ես, քանի որ շատ մօտիկ ընկեր եղած եմ Պետիկին, իմ յիշատակներես քիչ մը բաներ ըսեմ, խօսիմ, պատմեմ: Ես Պետիկը չէի գիտեր, բայց կը ճանչնայի եղբայրը՝ Մովսէսը, Հայաստան: Հայաստան այնքան կը խօսէր Պետիկին մասին, ես ալ կը մտածէի, որ ամէն մարդ իր եղբայրը կը գովէ, վերջ ի վերջոյ եղբայրն է, սրամիտ է եւ այլն:

Բայց օր մը եղաւ, որ վերադարձանք Պէյրուս Մովսէսին հետ, Մովսէսը գիս առաւ տարաւ «Ազդակ»-ի խմբագրատունը, որ այդ նշանաւոր Պետիկին հետ հանդիպիմ: Իջանք այդ Խոր Վիրապի պէս տեղը, իջայ եւ այս վտիտ տղան՝ ժպտուն, քիչ մը ակնածանքով եկաւ, որովհետեւ լսած է իմ անունս՝ բեմադրիչ եւ այլն, բայց ինք տակաւին այդքան յայտնի մէկը չէր, մեզ տարաւ սենեակ մը եւ սուրճ հրամցուց, ես զարմանքով նայեցայ՝ այս ինչ տարօրինակ, քիչ մը արտակարգ տիպ մըն է:

Անցան տարիներ, եւ այս տղան եղաւ, որ իմ տանս ճիշդ վարի յարկը Մովսէսին հետ կ'ապրէր, այդ Խոր Վիրապէն դուրս ելաւ, «Բագին»-ի այդ սենեակէն դուրս ելաւ, ուր գրեթէ բան մը չէր ուտեր, կ'իջներ, վարը խանութպան մը կար նարինջներ կ'առներ եւ հինցած, չորցած նարինջներ կ'առներ, ծախողը կ'ուրախանար, որ Պետիկը խաբէց, իսկ Պետիկն ալ կ'ուրախանար, որ խանութպանէն խաբուեցաւ թէեւ, բայց մարդուն քանի մը ոսկի շահիլ տուաւ: Այս տեսակ տիպար մըն էր այս տղան:

Երբ մեր վարի յարկը սկսաւ ապրիլ, ես զինք յաճախ վեր կը կանչէի. ես թէեւ շատ մարդ տեսնել չէի ուզեր, բայց Պետիկին ներկայութիւնը ինծի համար կարծես դեղ մըն էր: Վերէն կը կանչէի՝ «Պետիկ՛, վե՛ր եկուր, վե՛ր, վե՛ր»: «Կու գամ», կ'ըսէր, մէյ մըն ալ կու գար: Կու գար, կը նստէր, միշտ խոհանոցը կը նստէի, կ'ըսէի՝ «Գարեջո՛ւր կ'ուզես, թե՛ ուխքի»: Կ'ըսէր՝ «Արդէն ութսուն տակառ գարեջուր խմած եմ, ինծի գաւաթ մը ուխքի տուր»: Այսպիսով սկսաւ մեր մտերմութիւնը: Եւ օր մը պատահեցաւ, որ մայրս մահացաւ: Թաղեցինք, յաջորդ իրիկուն գլուխողջի եկան՝ Մովսէսը, Էլոն եւ Պետիկը: Պետիկը լուռ՝ անկիւն մը քաշուած՝ կ'ուզէր այդ սուգի պահին մէջ մտնել, բայց սուգ չէր կրնար տանիլ կարծես թէ ծանր էր իրեն համար: Եւ կամաց-կամաց սկսաւ պատմութիւններ պատմել, անեկդոտներ եւ այլն, եւ մէյ մըն ալ սկսաւ ժամերո՛վ պատմել իր եւ իր մէկ ընկերոջ Այնճարէն Պէյրուս իջնելու պատմութիւնը: Գոնէ մէկուկէս ժամ պատմեց՝ առանց դադարի: Ինծի երեք անգամ պատմած է իր ընկերոջ արաբերէն չգիտնալու եւ իր՝ արաբերէն կարողալ չգիտնալու պատմութիւնը եւ թէ ինչպէ՛ս հասած են Պէյրուս:

Չարմանալի բան, կարծես ձայնագրուած ըլլար ժապաւենի վրայ այդ

պատմութիւնը, երեք անգամին ալ մինչեւ կէտերը, ստորակէտերը չէր շփոթեր, գիտէր՝ ո՛ւր պիտի խնդայինք, գիտէր՝ ինչպէ՛ս պիտի խնդացներ, սրամիտ, սարսափելի սրամիտ տղայ մըն էր: Երկրորդ պատմութիւնը, որ մեզի կը պատմէր, «մուշապպեք»-ի պատմութիւնն էր: Աստուա՛ծ իմ. եղածը «մուշապպեք»-ի պատմութիւն մըն էր: Ամէն մարդ գիտէ ատիկա, բայց եթէ կրնաք, ձեզմէ մէկը թող ելլէ, կամ ես, դերասան ըլլալով, կրնա՞մ արդեօք այդ «մուշապպեք»-ի պատմութիւնը պատմել: Եւ արցունքներ կը բերեր աչքերնէս, այսինքն՝ նոյն պատմութիւնը յաճախ կրկնել կու տայինք, կարծես ձայնագրուած ըլլար:



Պետիկ Հերկելեանի դիմաքանդակը, գործ՝ Մկրտիչ Մազմանեանի

Շատ մեծ կորուստ էր ինծի համար Պետիկը, որովհետեւ ինչ որ կը մտածէի, իրեն հետ կը խորհրդակցէի: Ինքն ալ՝ կը բացուէր ինծի: Երբեմն կ'առնէր խորհուրդս որպէս մեծ եղբօր, իրապէս, որովհետեւ շատ սրտանց էի իրեն հետ, ինքն ալ՝ ինծի հետ: Թարգմանութիւնները, որ կ'ընէի, նախ իրեն կը կարդայի, ինքը աւելի գեղեցիկ բառերը, ճիշդ բառերը գիտէր, կը սրբագրէր համբերութեամբ: Ինչեւէ, այս է իմ ըսելիքս Պետիկին մասին, ես շատ մեծ ընկեր մը կորսնցուցի այն ժամանակ:

Չկրցայ տեսնել ներսի արձանը, յուսամ քիչ վերջ կ'երթամ, կը տեսնեմ: Հոն քանդակուած կը մնայ, ինչպէս իր յիշատակը ամէն մէկուս մտքին մէջ քանդակուած մնացած է: Շատ բարի, զուլալ, միամիտ ըսուելու չափ անուշ տղայ մըն էր: Պոյաճեան, Սնապեան եւ Հերեան: Շատ կէս մնաց բայց: Շատ մեծ, աւելի մեծ խոստումներ ուներ Պետիկը, կէս թողած՝ գնաց: Այսքան:



Կ'ուզեմ քեզ տեսնել Վարուժ:
Կու գամ իրիկուան...
յուսամ, ինչպես միշտ,
տրամադրություն ունիս մտիկ ընելու նոր երգերս...
Ամեն մեկ տողին,
Ամեն մեկ նոթին,
Ամեն մեկ իմաստին ետին
Դուն կաս... Վարո՛ւժ:
Պատրաստ եմ ու կարօտը ունիմ քու ստեղծագործ էությունդ
վայելելու, ինչպես միշտ՝ ինձի տուփը կրակդ, որ տակալին անմար
կ'ապրի մէջս: Թատրոնը կը շարունակուի մէջս եւ կը բեմադրէ բոլոր
երգերս,
մանաւանդ՝ վերջինները,
որոնք կը պատմեն մեր ունեցած անսման, անկրկնելի յուշերը...
ճարտարապետն ես այն հոգիին, որ սթափեցուցիր մէջս:

Միշտ կ'երգեմ այն երգը,
զոր կ'ուզէիր նուիրել անսման մօտիկ անձերուն...
Տղայ մը կար... այսօր քեզի կ'երգեմ, Վարո՛ւժ.

Տղայ մը կար,
Տարօրինակ եւ անսման,
Շատ հաճելի էակ մըն էր,
Հեռուէն կու գար,
Շատ պատմելիք
Բաներ ուներ...

Ամէկոտ էր,
Դեմքը տխուր,
Բայց շատ սիրելի,
Իմաստուն մըն էր:

Ես չեմ մոռնար,
Այդ օրը, երբ հանդիպեցանք,
Եւ հիւսեցինք շատ մը նիւթեր,
Առասպելներ, թագաւորներ եւ խենթեր...

Յայտնեց ինձի,
Թէ արժեքը կեանքին
Մէկ բան է միայն,
Անձ մը սիրել
Եւ նոյնպէս սիրուիլ...

ՎԻԳԵՆ ՂԱՐԲԻՆԵԱՆ

ՀԱՅ ԲԵՄԻ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԲԵՄԱԴՐԻՉ-ԴԵՐԱՍԱՆԸ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լիբանանահայ շատ մը բեմադրիչներ վերջին երեսուն տարիներու ընթացքին, ուսանելով Խորհրդային Հայաստանի մէջ, Պէյրութ բերին հայրենի բեմական արուեստի գեղեցիկ ներկայացումներն ու խանդավառեցին հանդիսատեսը: Վարուժան Խտըշեան ըրաւ հակառակը, աւարտելէ ետք Լոնտոնի Արքայական դպրոցը, ոչ միայն եւրոպական բարձր, յատկապէս անգլիական դպրոցի դարերու փորձը բերաւ Պէյրութ, այլեւ տարաւ Հայաստան՝ հոն եւս ցուցադրելով իր վարպետի կարողութիւնները նոր մօտեցումներով: Վարուժան սիրուեցաւ, գնահատուեցաւ, մինչեւ այդ միայն ռուսական բեմադրական արուեստի ազդեցութեամբ կազմաւորուած հայրենի բեմադրիչներն եւ հանդիսատեսէն:

Իր խաղարկութեան ամենափայլուն ապացոյցը տուաւ «Ձորի Միօ» ժապաւենին մէջ մարմնաւորելով ռուսական բանակի հայ զինուորի կերպարը, որ օգնութեան ձեռք կ'երկարէր իր հայրենի լեռներուն մէջ մարտնչող հայ վրիժառու մարտիկին՝ լեցնելով անոր խուրշինը փամփուշտներով: Ան մարմնաւորեց բեմի վրայ այլ հերոսներ, ինչպէս ըրած էր Պէյրութի մէջ:

Սակայն ինչ որ տեսանք Պէյրութի մէջ, իբրեւ արհեստավարժ բեմադրիչ եւ դերասան, չէր գիշեր Փարիզի մէջ ներկայացուած բեմադրիչներուն եւ դերասաններուն: Նոյնիսկ կը գերազանցէր զանոնք իր հուժկու տաղանդով ու վարպետութեամբ: Այս պահուն, նկատի ունիմ իր քանի մը բեմադրութիւնները, որոնց մէջ ինք կը մարմնաւորէր հերոսներ, ինչպէս՝ «Ռ՞վ կը վախճայ Վերժինիա Վուլֆէն», «Մեթրը Սոլնես» ու մանաւանդ՝ կոթողային «Սաատ բանտի մէջ»:

Վարուժան բոլորովին նոր շունչով ներկայացուց Լեւոն Շանթի «Հին Աստուածները», անփորձ (ամաթօր) սիրող դերասաններով, որոնց սորվեցուցած էր դերասանութիւն... Լոկ Լեւոն Շանթ կրնար երեւակայել նման բեմադրութիւն, նման մեկնաբանութիւն:

Վարուժանի անժամանակ մահը աղետ մը եղաւ Լիբանանի հայ թատրոնին համար:

Յարգանք իր յիշատակին եւ հանգիստ՝ իր տառապած մարմնին...:

Չինք պիտի չմոռնանք երբեք...

ՅԱՐՈՒԹԻՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Պէյրութ, 27 յունուար 2016

ԵՐԲԵՄՆԻ «ԱՊԱԳԱՅ ԽՈՍՏԱՅՈՂ» ՄԱՆՉԸ

1955-ին «Գասպար Իփէկեան» թատերախումբը որոշած էր բեմադրել Լ. Շանթի «Շղթայուած»-ը: Հարճի դերին համար կը փնտռէի օրիորդ մը: Դիմեցի Սոնա Խտըշեանին: Մերժեց: Բայց խնդրեց, որ դեր մը տամ իր 17 տարեկան փոքր եղբորը. «Շնորհալի է ու շատ կը փափաքի բեմ ելլել»: Ըսի՝ թող գայ: Եւ եկաւ Վարուժանը: Իր տարիքին յարմար դեր մը տուի: Արդիւնքէն գոհ մնացի, որովհետեւ խմոր ուներ եւ ապագայ կը խոստանար: Յետոյ, տարուէ տարի հետզհետեւ աւելի կարելոր դերեր խաղալով՝ 7 տարի վերջ դարձած էր արդէն թատերախումբին կարելոր ու կազմաւորուած ուժերէն մէկը, մասնաւորաբար՝ **քաղաքների** դերերուն պատշաճող:

Օր մը սակայն անակնկալի մը առջեւ գտնուեցայ: Յայտնեց, թէ որոշած է երթալ Լոնտոն՝ թատերական ճիւղին հետեւելու: Իր այդ որոշումէն ետ կեցընելու համար թափած բոլոր ջանքերս մնացին ապարդիւն: Գնա՛ց...

Բայց ահա, վերադարձէն մինչեւ այսօր, ամբողջ 10 տարի, ներկայացում մէ ներկայացում, Վարուժանը ո՛չ միայն շարունակեց տալ երբեմնի «ապագայ խոստացող» դերակատարէն սպասուածը, ո՛չ միայն շարունակեց հաստատել իր դերասանական անվիճելի շնորհքը, այլեւ դարձաւ ինքնավստահ ու յանդուգն բեմադրիչ մը:

Թատրոնի ճամբան սակայն փշոտ է. ասպարեզը՝ ապերախտ: Յաղթահարելու համար անհատնում խոչընդոտները, վերիվայրումներն ու յուսալքումները՝ պէտք է զինուիլ յամառ յարատեւութեամբ, անպարտելի հաւատքով եւ աննկուն կամքով:

Դերասան ու բեմադրիչ Վարուժանը իր նկարագրին ու խառնուածքին մէջ ունի այդ գծերը: Սրտագին մաղթանքս է, որ զինաթափ չըլլայ եւ շարունակէ նոյն թափով:

ԺՈՐԺ ՍԱՐԳԻՍԵԱՆ

* * *

Վարուժան Խտըշեան իսկական թատրոնի ճաշակը բերաւ մեզի եւ լիբանանահայ բեմի լաւագոյն ներկայացումներէն մէկ քանին իրագործեց:

Չանազան պատճառներով ան չկրցաւ իրականացնել իր բոլոր հնարաւորութիւնները եւ ստեղծել կէս արհեստավարժ թատրոն մը, որ պսակումը պիտի ըլլար իր ճիգերուն:

Կը մաղթեմ, որ ան գործադրէ հետեւողական քաղաքականութիւն մը՝ տարեկան երեք ներկայացում բեմադրելով.

- Հասութաբեր կատակերգութիւն մը,

- Մանկապատանեկան ծեռնարկ մը,

- Խստապահանջ ճաշակներ գոհացնող թատերակ մը:

Խտըշեան իսկական բեմի մարդ է, իր տուած լաւ գրաւականն է տալիք լաւագոյնին:

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՅԱԿՈՔ ԼԱՏՈՅԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԴԱՄՔԱՆԱԿԱՆԸ

Այսօր հաւաքուած ենք մեր յարգանքի վերջին տուրքը տալու անձի մը, որ անցնող տասնամեակներուն մեր թատերական կեանքի մէջ իր յատուկ տեղը ունեցած է:

Թատրոնը մեր կեանքին նոր պատուհան բացող հանրային դպրոց մըն է: Վարուժան Խտըշեանը Անգլիա ուսանած եւ իր նորարար հոգիով եւ ոգիով եկաւ հարստացնելու մեր դասական ընթացքը: Անոր բերած նորարարութիւնը յեղափոխութիւն մըն էր խորքին մէջ, որ մեծ փոթորիկ հանեց օրին, դերասանն ու հանդիսատեսը, քննադատն ու արուեստագէտը՝ բոլորն ալ միասնաբար եկան նոր, բայց դասական արմատներով եւ սկզբունքով հարուստ թատրոնին իրենց մասնակցութիւնը բերելու:

Համագգայինի ոգեղէն թատերական պանթոնին մէջ այսօր կը հանգչին Գասպար Իփեկեանը, Ժորժ Սարգիսեանն ու տղքթ. Բաբգէն Փափագեանը: Ամէն մէկը իր շրջանին իր գործով կնիքը դրաւ մեր թատերական կեանքին վրայ: Այսօր անոնց կը միանայ Վարուժան Խտըշեանը, որ իր կարգին իր դրոշմը դրաւ մեր թատերական կեանքին վրայ՝ խտըշեանական դրոշմը:

Վերջին երեք տարիներու լուռ գրուցակից էինք, Վարուժ: Ամէն անգամ որ կ'այցելէի քովդ աչքերդ կը փայլէին, ձեռքս կը սեղմէիր, փայլուն ժպիտ մը կ'ուրուագծուէր դեմքիդ վրայ, ու կը հասկնայի շատ բան: Կը հասկնայի, որ հոգիդ եւ ցաւդ թէթեւցած են: Կը հասկնայի, որ ուրախ էիր, որ առանձին չէիր, կը հասկնայի աչքերեդ, որ շատ ըսելիք ու ընելիք ունէիր դեռ...

Պէտք է անկեղծօրէն խոստովանիլ, որ Անժելայի անսակարկ նուիրումը եւ պահապան հրեշտակի նման գուրգուրանքը Վարուժին վերջին երեք տարիներու կեանքը երկարեց: Վարուժը, կը յիշեմ, Ժեիթաուի հիւանդանոց գտնուած ժամանակ Վարուժը, չէր ուզեր, որ վայրկեան մը իսկ Անժելան հեռանայ քովէն: Անապահով կը զգար եւ անմխիթար:

Մեր թատերական կեանքին մէջ Վարուժան Խտըշեանը էր՝ դերասան, բեմադրիչ, թարգման եւ բառին ամբողջական առումով արուեստագետ, ըսել կ'ուզեմ՝ երաժշտական, հագուստի, տնքորի, լոյսի, ձայնի, որմագդի այդ բոլոր մանրամասնութիւններուն ճկուն եւ հնարամիտ ստեղծագործողն էր: Վարուժան Խտըշեանը «բեմի հրէշ» էր, ինչպէս կ'ըսեն ֆրանսացիները. դժուար էր Վարուժանին հետ աշխատիլը՝ թէ՛ իբրեւ դերասան եւ թէ՛ իբրեւ վարչական:

Սակայն այդ դժուարութիւնը կը մոռցուէր, երբ առաջին անգամ վարագոյրը բացուէր եւ ներկայացման յաղթական երթը սկսէր, ես ակաւնատես եղած եմ իր այդ հաճոյքին: Վարուժան Խտըշեանը թատերական դպրոց էր: Դասական թատրոնի նորարարութիւնը բերելով, սակայն միշտ դասական արմատները պահելով՝ Վարուժանը կրցաւ նոր կեանք եւ շուկա տալ մեր թատրոնին:

Վարուժանը նաեւ նախակարապետն էր Հայաստան-սփիւռք կապին: Անկախութենէն առաջ արդէն կամուրջներ հաստատած էր Սօս Սարգսեանին հետ իր մտերմութիւնը, հայրենի արուեստագետներու հետ իր ձեռք ձգած յաջողութիւնները նոր էջ բացին եւ բարձունք մը տուաւ մեր թատերական կեանքին: Խստապահանջ էր, սրամիտ, զգացական էր եւ յեղափոխական, առողջանութեան եւ լեզուի շատ կարեւորութիւն կու տար, այս բոլորին մէկտեղումն էր Վարուժանը:

Անգլիա ուսանած, բայց այդ մասնագիտութենէն իր ինքնուրոյն ոճը ստեղծած Վարուժանը վերջին տարիներուն շատ կը փափաքէր Լեւոն Շանթի «Շղթայուած»-ը բեմադրել: Մեր կեանքին դժուարութիւնները եւ տագնապները տեսնելով՝ «Շղթայուած»-ը շատ այժմեական կը գտնէր:

Ձեռով մը կտակ մեզի՝ համագգայնականներուս, որ Վարուժան Խտըշեանին համար «Շղթայուած»-ը բեմադրենք:

Այսպէս տարիներու վրայ իր թատերական ներդրումը մեծ դրոշմ մը ձգած է մեր թատերական կեանքին մէջ: Այսօր, փաստօրէն, աշխարհի չորս ծագերուն, Ամերիկայէն Աւստրալիա, Զանաւայէն Ֆրանսա, Լիբանանէն Արցախ, Վարուժան Խտըշեանի դերասանները մեր թատրոնը վառ կը պահեն:

Վարուժանի դպրոցէն անցած տղաքն են, որ անոր ճրագը բարձր պահելու ճիգ կ'ընեն:

Դժուար է սփիւռքի այս սիրապաշտ, մաշեցնող եւ անկայուն վիճակներու մէջ մշակոյթ պահելը, աւելի դժուար է թատրոն պահել, սակայն Վարուժ Խտըշեանի վաստակը կու գայ հաստատելու, որ հաւատքը եւ տեսիլքը դժուարութիւններ չեն ճանչնար, եւ այդպէս ալ աշխատեցաւ Վարուժան Խտըշեանը, իսկ Համագգայինը միշտ անոր կողքին մնաց եւ քաջալերողը եղաւ անոր բոլոր ծրագիրներու յաջողութեան:

Վա'րձքդ կատար, սիրելի՛ Վարուժան:

Վա'րձքդ կատար, Անժելա:

Վարձքերնիդ կատար՝ բոլոր այն տղոց, որոնք անցնող տարիներուն Վարուժանը առանձին չձգեցին, վարձքդ կատար՝ մասնաւորապէս Ազունիէի բուժարանին եւ տնօրէնին:

Հողը թեթեւ գայ վրադ:

ԺԱՆ ՔԱՍԻՍԻ ԴԱՄՔԱՆԱԿԱՆԸ

Այսօր հրաժեշտ կու տանք Վարուժան Խտըշեանին:

Բացառիկ կարողութիւններով եւ միշտ փայլուն դերասանն ու բեմադրիչը, սիրով եւ բարութեամբ բուրդ մարդը, որ հարբելու աստիճան կը սիրէր կեանքը:

Վարուժան Խտըշեան այն մարդն է, որուն համար թատրոնի մեծ հանճար Ռեմոն Ժպարան յոտնկայս ծափահարեց «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Խտըշեանի բեմական ներկայացումներուն մէկուն աւարտին էր այդ պահը, երբ ժպարա հմայուած սրահին մէջ գոռաց՝ «Վարուժա՛ն, դուն հանճա՛ր ես»:

Բախտը ունեցած եմ ներկայ գտնուելու այս մեծանուն բեմադրիչին ներկայացուցած շարք մը թատրերգութիւններուն, ինչպէս «Կամուրջէն դիտուած», «Հին աստ-լածներ», «Հայաստանի լեռներու սրնգահարը», «Երկնքի ճամբով» եւ այլն:

Ինծի վիճակուեցաւ նաեւ գործել անոր հետ «Պիպի պըտտօ պէյ» թատրերգութեան մէջ, որ ներկայացուեցաւ գործակցութեամբ Մուսիր Քեսրուանիի: Այդ փորձառութեանս ընդմէջէն բացայայտեցի բեմադրութեան իմաստով Խտըշեանի բացառիկ հմտութիւնը՝ որպէս արհեստավարժ բեմադրիչ եւ բարձր կարողութիւններ վայելող դերասան, որ իր շարժումներով եւ նուրբ զգացումներով բեմը կը թնդացներ, առանց ազդուելու իր ոտքի անդամահատումէն:

Իր մէջ յայտնաբերեցի այն մարդը, որ դիմացինը կը գրաւէ իր բարութեամբ, կենսունակութեամբ, ստեղծագործութեամբ եւ հանճարով, որոնք երբեք չխանգարեցին անոր համեստութիւնը:

Ան սիրալիր էր, բարեկամ եւ խորապէս հաւատարիմ:

Վարուժան Խտըշեան, որուն աշակերտեցին հարիւրաւոր, գուցէ հազարաւոր, թատերական գործիչներ, կը մնայ փայլուն կնիք մը հայկական եւ լիբանանեան թատրոնին ճակատին:

Հանգիստ ննջէ, բարեկա՛մս, դո՛ւն մեր սրտերուն մէջ յաւերժ պիտի ապրիս: Վարուժա՛ն, անունդ փորագրուած է Արարատ լեռան ժայռերուն եւ Լիբանանի մայրիներու կոճղերուն վրայ:

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻՆ

Ան եկած է ժողովուրդէ մը, որ բնակած է վերջին մէջ, եւ որ միշտ իբրեւ ընկերակից ունեցաւ ահաւոր շարդերը, որոնք շարունակուեցան սերունդէ սերունդ:

Իր ժողովուրդին հանդէպ Վարուժանին սերը ժայթքեց՝ «Յ. Տէր Մելքոնեան»-ի բեմին վրայ՝ Օշականի «Երկնքի ճամբով» ներկայացումով:

Կտորներ, որոնք մեզ յուզեցին, մենք, որ գիտէինք միայն «ապաո՛ւ» բառը, որ միշտ կը կրկնէր Վարուժան:

Արցունքէն բացի, մեր մէջ սերմանեց երգիծական ոգին, համալսարանին մէջ թէ դուրս խաղացած կատակերգութիւններուն մէջ:

Այս տխուր օրով մեծն Վարուժանը կ'իջնէ բեմէն ու կը վերադառնայ երկրի քուլիսները՝ Մար Մըխայէլ:

Օր մը ինծի ըսաւ, որ եթէ Հայաստանը մեզի վերադարձուի, ես չէի ուզէր հոն վերադառնալ, կ'ուզէի հոս ապրիլ ու մեռնիլ Մար Մըխայէլ, ուր որ ծնայ: Ասիկա կը բացատրէ, թէ ինչո՛ւ ձգեց Անգլիան իր մասնագիտանալէն ետք:

Արդարեւ, ան ըսաւ, որ կ'ուզէ օգտակար դառնալ իր երկրին ու Լիբանանի զաւակներուն:

Մենք հրաժեշտ կու տանք մէկու մը, որ երկրաշարժ յառաջացուցած Լիբանանի համալսարանի թատրոնի բաժանմունքին մէջ, ու զարմանալի էր այն, որ նոյնիսկ իր անունը սխալ գրեցին «Հատեշեան»:

Վարուժանը մեծ էր իր կեանքին ու պայքարին մէջ ու մնաց վիրաւոր արծիւը իր վշտի ու մեկնումին մէջ: Ան իրապէս բեմի վարպետ էր:

Ան գիտէր ինչպէ՛ս ընտրել իր թատերախաղերը՝ սկսեալ Ժորժ Շիատէէն, Միլըր, Չեխով, Մոլիեռ, Նիլ Սայմոն եւ ուրիշներ:

Երբ ծանօթացայ իրեն, արուեստի ուսումնարանի դասախօս էր, ու ինծի նկատմամբ տածած սիրոյն եւ գնահատանքին իբրեւ դրսեւորում՝ ընդունեց բեմադրել իմ ստեղծագործութիւններէս երկուքը: Ռեմոն Ժպարան եւ ինք եղան թատրոնի մէջ իմ յառաջընթացիս պատճառը: Գրաւիչ ու հմայիչ վարպետ էր:

Ժպարայի եւ Տանիէլի հետ կազմեցին ուսումնարանի ողնաշարը: Վարուժանը առաջինն էր, որ ուսումնարանին մէջ ներկայացուց ամերիկեան թատրոնը, ու փաստը, որ ուսանողները իր շուրջ կը հաւաքուէին:

Սկիզբը ան կը կշռէր 100 քչ. նուիրուածութիւն եւ ուրախութիւն, սակայն ան կը թռչէր թիթեռնիկի նման ու մարմնին վրայ կը ճնշէր զսպանակի նման:

Պատերազմին յանկարծ ան վերադարձաւ մէկ ոտքով, բոլորս շանթահար եղանք, սակայն ան պինդ ու զուսպ կը թուէր:

Վարուժանը այն ուսուցիչն է, որ արժանացած է ուսանողութեան յարգանքին եւ գործընկերներուն սոսկումին, կը նախանձէին իր ժողովրդականութեան ու գիտելիքներուն համար, անոր համար ալ գայն զրկեցին համալսարանի անձնակազմի մնալուն անդամ ըլլալէ, ու միայն իրենք մաս կազմեցին՝ գանձելով միլիոններ: Վարուժանը անոնցմէ չսորվեցաւ պատեհապաշտութիւնը, քանի որ ան վսեմ մարդ էր:

Մինչեւ երէկ մեր ուսուցիչը լեռ մըն էր՝ Լիբ թագաւորի նման վեհ, ուներ Ռոմէոյի գայթակղութիւնը՝ եւ Համլէթի նման տագնապող էր:

Մեզի՝ իր ուսանողներուն հետ կերտեց իր շքեղ ապարանքը, որուն հետ ոչ ոք կրնայ մրցիլ:

Ան ապրեցաւ իր արուեստին համար, շատ բան տուաւ մեզի, սակայն շատ քիչ առաւ: Երբ ոտքը կորսնցուց, իր կինը՝ Անժելան դարձաւ ամէն ինչ: Գուրգուրաց շփացած մանուկի նման ու շուքի պէս իրեն հետ մնաց: Միայն Աստուած կրնայ վարձատրել զինք՝ իբրեւ իսկական արուեստագիտուիի եւ մարդ:

Վարուժանը կը հեռանայ ու կը վերածուի անմահութեան, նուիրուածութեան ու կաղնիի կայունութեան խորհրդանիշի՝ իմ երկրիս մէջ, այլ մեծերու կողքին:

Ռ՛վ իմ եղբայր, իմ ուսուցիչ, դուն պիտի շարունակես մնալ մեր մէջ:

Թող քու հոգիդ ողջագուրուի երկրի հողին եւ Հայաստանին հետ, զոր սիրեցիր:

Մենք ալ պիտի մնանք հաւատարիմ քեզի ու վեհ նպատակներուդ:

Քեզ կը սիրենք, Վարուժա՛ն: Աստուած հոգիդ լուսաւորէ:

30/12/2015

ՄՈՒՆԻՐ ՔԵՍՐՈՒԱՆԻ

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Քառասուն օր առաջ լիբանանահայ գաղութը կորսնցուց տաղանդաւոր դերասան ու վաստակաւոր բեմադրիչ Վարուժան Խտըշեանը, որ տասնամեակներ շարունակ անձնուիրաբար ծառայած էր հայ մշակոյթին՝ իր կեանքը նուիրելով լիբանանահայ թատրոնի վերելքին: Երեքշաբթի, 2 փետրուար 2016-ին «Ազդակ»-ի յարկին տակ «Թատրոն 67» թատերախումբի դերասաններէն Յակոբ Գալայճեան, Չաւեն Պաաքլիսի, Յովսէփ Գափլանեան, ինչպէս նաեւ Զամազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբի վարչութեան ատենապետ Մարտիկ Տեմիրճեան իրենց վկայութիւնները, յուշերն ու տպաւորութիւնները պատմեցին վաստակաւոր բեմադրիչին՝ Վարուժան Խտըշեանին մասին, որուն մահը խորապէս ազդած էր անոնց վրայ, եւ որոնք հաստատեցին, թէ Վարուժան ոչ միայն իրենց հետ պիտի ապրի ընդմիշտ, այլ երկար պիտի մնայ լիբանանահայ բեմի պատմութեան եւ ժողովորդի յիշողութեան մէջ:

Որպէս դերասան՝ Վարուժանը մեծ ազդեցութիւն ձգած է վրաս: Վարուժանին պարտական եմ հայերէնը ճիշդ խօսելու եւ հնչելու մէջ, դերասանական հմտութիւններու, բեմական շարժումներու, շնչառութեան փորձառութեան ձեռքբերման եւ ուրիշ շատ բաներու մէջ: Կը յիշեմ՝ թատերախաղերուն Վարուժանի խորաթափանց վերլուծումները, յանպատրաստից փորձերը, որոնք ընդհանրապէս անելի երկար կը տեւէին, քան՝ բեմական փորձերը, եւ որոնք ընթացքին մեզ հոգեպէս կը պատրաստէր լաւագոյն ձեւով մարմնաւորելու տիպարներն ու ընկալելու գաղափարները: Վարուժան յաճախ կ'ըսէր, որ ինք քարէն դերասան կրնայ հանել: Երբեմն պատահաբար հանդիպած անձ մը բեմ կը հանէր: Կը պատահէր նաեւ, որ առաջին անգամ բեմ բարձրացողին տար գլխաւոր դեր, եւ տուեալ անձը յաջողութեամբ դերը կը կատարէր:

Թատերախաղերու ընթերցման ժամանակ ու նաեւ բեմին վրայ փորձերու ընթացքին Վարուժան կը հրաւիրէր գրող-բրող մարդիկ ու կը խնդրէր, որ տան իրենց կարծիքները: Ան համեստօրէն կ'ընդունէր բոլոր քննադատութիւնները եւ կ'ուղղէր այն ինչ որ պետք էր:

Վարուժանը մարդ պահելու, խումբ պահելու զօրաւոր յատկութիւն մը ունէր: Մինչեւ այսօր Լիբանանէն հեռացած թատերախումբի տղաքն ու աղջիկները իրարու հետ կը շարունակեն կապ հաստատել. երեւոյթ մը, որ Վարպետին կը պարտիք: Վարուժան Խտըշեանը մեր մէջ արմատացած է: Մեր ծնողքէն անելի Վարուժանին հետ անցուցած ենք մեր կեանքը: Կը վախճանամ մտածելով, որ անոր մահէն ետք իր մեծութեամբ ու կարողութեամբ բեմադրիչ մը պիտի ունենանք մեր գաղութին մէջ:

ՉԱՒԵՆ ՊԱԱԶԼԻՍԻ

Վարուժանին հորիզոնները անծայրածիր էին: Ամէն մէկ տողի վրայ երբեմն կ'աշխատէր ժամեր. կը վերլուծէր, կը բացատրէր: Փորձերը կը տեւէին մինչեւ ուշ գիշեր, դերասանները կը յոգնէին, իսկ ինք կրկնել կու տար, մինչեւ որ խօսքը կամ գործողութիւնը ըլլար իր ուզածին պէս: Ան ամէն ճիգ ի գործ կը դնէր ժողովորդին տալու ճիշդը, վեհն ու գեղեցիկը: Ան միշտ կ'ըսէր. «Եթէ լաւ խաղաք, բարենիշը դուք կ'առնէք, իսկ եթէ վատ՝ կը մեղադրուի բեմադրիչը միայն»: Զամեստաբար կ'ըսեմ, որ մենք ունինք նախնական կրթութիւն միայն, բայց մեր լեզուն Վարուժանին կը պարտինք: Ան բոլորովին անտաշ մարդիկ յաջողութեամբ բեմ կը հանէր:

Վարուժան բծախնդիր էր նաեւ բեմի յարդարման, դերասաններու տարագի բծախնդիր ընտրութեան, գոյներու եւ ձեւերու համաչափութեան ու ներդաշնակութեան:

Ներկայացման ժամանակ ան քուլիսներուն ետեւ նստած՝ տող-տող կը հետեւէր դերասաններուն ու կը զգացուէր, շատ կը յուզուէր, մինչեւ իսկ կու լար: Փորձերու ընթացքին ան խստապահանջ էր, հետեւողական, ճշգրտապահ ու կատարեալին ձգտող, բայց փորձէն ետք ան կը դառնար հաճելի գրուցակից ու սեղանակից: Վարուժանը հիմա մեր մէջ կ'ապրի:

ՅՈՒՍԵՓ ԳԱՓԼԱՆԵԱՆ

Վարուժանը իսկական մարդ էր: Իր շրջապատին, իր խումբին եւ բոլորին կ'ուզէր սորվեցնել ամէն բանէ առաջ մարդ ըլլալու կարեւորութեան մասին: Իր ներկայացումներուն ընդմէջէն կ'ուզէր բոլորին ցոյց տալ մարդ ըլլալու վեհ կոչումը: Կ'ուզէր հասարակութեան յայտնել, որ մարդը իր զգացումներով մարդ կ'ըլլայ, ոչ թէ՝ աշխարհ գալով ու ապրելով: Վարուժան կ'ըսէր, որ մարդ իր մարդկայնութիւնը պիտի ընէ, որպէսզի մարդ կոչուի: Անոր ներկայացումները այս գաղափարը կը շօշափէին, կը ջանար հասարակութեան հասցնել այս միտքը:

Պէտք է ըսել նաեւ, որ Վարուժանին քով մեծ դեր, պզտիկ դեր չկար: Կար մեծ դերասան եւ պզտիկ դերասան: Դերերը կարեւորութիւն չունէին իրեն համար: Ան կ'ըսէր, մարդ կրնայ շատ կարճ դերով բեմ ելլել ու գլխաւոր դերասանէն անելի լաւ կատարել դերը՝ շահելով լայն ժողովրդականութիւն: Ան բոլոր դերասաններուն համար հաւասար ժամանակ կը տրամադրէր, նոյնիսկ մունջ դեր ունեցողներուն ալ ժամանակ կը տրամադրէր, որ բեմին վրայ ճիշդ կատարեն իրենց քայլուածքն ու շարժումները: Բեմի բծախնդիր



Վարպետը, որ եկաւ Լիբանան Անգլիա ուսանելէն ետք, նոր դուռ բացաւ հայ թատրոնէն ներս: Եկաւ ըսելու, թէ ինչ որ ներկայացուած էր, շատ լաւ է, բայց կայ անելի լաւը: Ան ձգտումը ունէր կատարեալին: «Մեծ վարպետ Սոլնէս» թատերախաղին մէջ ստանձնած էր վարպետին դերը: Ան մարմնաւորելով տիպարը՝ կ'ըսէր հասարակութեան, որ ժամանակն է տեղ տալու երիտասարդութեան: Վարուժան բծախնդրօրէն կը հսկէր բեմի ամէնէն յետին մանրամասնութիւններուն: Ան բեմի քարտէսը կը գծէր ու իւրաքանչիւր դերասանին կը տրամադրէր, որ դերասանը իմանայ, թէ տուեալ խօսքի ընթացքին ո՛ր է իր տեղը բեմին վրայ: Պատահական աշխատանք չէր բեմադրութիւնը Վարուժանին համար, այլ՝ ծրագրաւորուած ու կազմակերպուած աշխատանք: Դժբախտաբար ներկայիս նման բծախնդրութեան չենք հանդիպիր:

Թէեւ հաշտուած էինք Վարուժանի հիւանդութեան հետ, յաճախ կ'այցելէինք իրեն, կը կատակէինք անոր հետ: Բայց երբ մահուան լուրը առինք, խոր ցաւով սգացինք: Ան մեզմէ մասնիկ մըն էր ու անվերադարձ կորսուեցաւ:

ՅԱԿՈԲ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Արուեստի բոլոր բնագաւառներուն մէջ շատ նկարիչներ կան, շատ երաժիշտներ, բայց բոլորին մէջ մէկը ինքնուրոյնութիւն կ'ունենայ, իր արուեստը մեկնաբանելու սեփական ոճ մը կ'ունենայ. ահա ճիշդ այստեղ կը սկսի արուեստի եւ արհեստագիտութեան տարբերութիւնը: Մարդ կրնայ շատ լաւ դաշնակահար ըլլալ ու անթերի նուագել, բայց չի կրնար ունկնդիրին փոխանցել արուեստի խոր զգացողութիւնը: Ես դերասան չեմ, բայց իբրեւ վարչական պատասխանատու՝ Վարուժանի փորձերուն ներկայ կ'ըլլայի ու կրնամ ըսել, որ թատրոնը դիտելէն անելի՝ փորձերէն հաճոյք կը ստանայի: Փորձերու ընթացքին ան կը մեկնաբանէր ամէն մէկ տողը, դարձուածքները, արտայայտութիւնները: Կը պատահէր, որ օրերով ուղղութեամբ մը ընթանար Վարուժանի մեկնաբանութիւնը, եւ յանկարծ տուեալ պահի մը գայն փոխէր: Վարուժան Խտըշեան եկաւ արուեստի նոր ըմբռնում ու զգացողութիւն փոխանցելու: Ես կը կարծեմ, որ Լիբանանի մէջ վերջին 25-30 տարիներուն Վարուժան մեծապէս յաջողած էր իր մեկնաբանութիւններով թատերական արուեստի հաճոյքը փոխանցել հասարակութեան:

Վարուժանին երկրորդ արժանիքը նորարարութիւնն էր: Սովորաբար շատ դիւրին է նոյնը կրկնել, նոյնը հրամցնել, բայց դիւրին չէ նոր բան ընել, որովհետեւ նորը կրնայ տանիլ անհեթեթութեան: Ուրեմն Վարուժան Անգլիայէն երբ Լիբանան վերադարձաւ, արդէն հաստատուած ու կայացած բեմադրիչ էր: Իսկ այն ժամանակ Լիբանանի մէջ յիսուն տարիէ կը ներկայացուէր գեղեցիկը ու նաեւ ժամանակի ոգին յարմարողը: Բայց մտածողութիւններու մէջ նորարարութիւն մտցնելը, հինէն մնացած ոճերը քանդելն ու նոր ըմբռնումներով ճամբայ ելլելը կ'ենթադրէր արուեստի յանդգնութիւն, որն ունէր Վարպետը: Եւ ահա Վարուժան Խտըշեան այս առումով արձանագրեց յաջողութիւն:

Մասնագետ, արհեստավարժ խմբավարին, բեմադրիչին համար ամենակարեւորը իրենց ունեցած տարրերն են: Վարուժան գործ պիտի ունենար մարդոց հետ, որոնք բեմական կրթութիւն եւ բեմական ուսում չունէին: Մեծ թատրոններուն մէջ դերի մը համար կարելի է գտնել տասնեակ մասնագետ դերասաններ եւ ընտրել լաւագոյնը: Լիբանանահայ թատերական կեանքը այդպէս չէ, երբեմն բեմադրիչը ստիպուած քարէն դերասան պիտի շինէ: Երբեմն վստահ չ'ըլլար, թէ այն արհեստաւորը, որ սիրով եկած է գործէն ետք դեր խաղալու, պիտի կարենայ բարդ հոգեվիճակները բեմադրիչէն ընկալել, ապա փոխանցել գեղեցիկ ձեւով: Վարուժանը այս դժուարութիւնը ունէր, գոր շրջանցած էր:

Վարուժանի նախնական թատերական մթնոլորտը «Գասպար Իփեկեան»-ն էր՝ Ժորժ Սարգիսեանի բեմադրութեամբ: Թատերախումբը օրէն ալ ծանօթ է հայ լեզուին հանդէպ բծախնդրութեամբ: Այս պատճառով ալ հին դերասանները միշտ ալ կը վախճան, որ ներկայացումներուն մէջ լեզուական թերութիւններ չըլլան: Վարուժանն ահա այս տեսակ դպրոցէն եկած էր:

Շար.ը՝ էջ 11

ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Սիրելի՛ հայրենակիցներ,
Խորին ցաւով տեղեկացանք լիբանանահայ բազմավաստակ դերասան եւ բեմադրիչ Վարուժան Խտըշեանի մահուան մասին: Ընդունեք մեր անկեղծ եւ սրտագին ցաւակցութիւնները:

Վարուժան Խտըշեանը տասնամեակներ շարունակ անձնուիրաբար ծառայել է ազգային մշակոյթի լաւագոյն աւանդոյթների պահպանմանն ու սերնդէ սերունդ փոխանցմանը՝ իր ուրոյն հետքը թողնելով լիբանանահայ թատերարուեստի անդաստանում եւ հայ բեմի պատմութեան մէջ:

Համոզուած ենք, որ ազգի տաղանդաւոր զաւակ, վաստակաշատ մանկավարժ, սիրուած դերասան եւ բեմադրիչ Վարուժան Խտըշեանի բարի անունն ու յիշատակը միշտ վառ կը մնան հարազատների եւ մերձաւորների, ողջ հայութեան յիշողութիւններում:

Անդառնալի կորստի այս դժուարին պահին խորապէս կիսում ենք ձեր վիշտը:

Աստուած լուսաւորի մեր ազգի արժանաւոր զաւակի հոգին:

Հայաստանի Սփիւռքի Նախարար
ԶՐԱՆՈՒՇ ՅԱՎՈՐԵԱՆ

Հայ կրթական եւ մշակութային միութեան Լիբանանի
«Գասպար Իփեկեան» թատերախմբին եւ բեմադրիչ
Վարուժան Խտըշեանի ընտանիքին

Խոր վշտով տեղեկացանք բեմադրիչ եւ դերասան Վարուժան Խտըշեանի մահուան մասին:

Մեր զօրակցութիւնն ենք յայտնում Ձեզ՝ անհատուցելի կորստի ցաւը յաղթահարելու համար եւ մաղթում ոգու ամրութիւն:

Խորին վշտակցութեամբ
Հայաստանի մշակոյթի Նախարար՝

ՅԱՍՄԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ

Խտըշեան ընտանիքին,

Սիրելի Խտըշեաններ,

Սրտի մեծ ցաւով ընդունեցինք թատերական արուեստի նուիրեալի, մտաւորականի, բազմավաստակ բեմադրիչ Վարուժան Խտըշեանի մահուան գոյժը:

Ցաւակցում ենք Խտըշեան ընտանիքի բոլոր անդամներին, հարազատներին, բարեկամներին, բոլորի հետ կիսում ենք անդառնալի կորուստի ցաւը:

Հայաստանի եւ Սփիւռքի թատերական կեանքում ունեցած նրա անուրանալի ներդրումը երկար կը պահի նրա յիշատակը մեր բոլորի սրտերում:

Ցաւակցական ամենաանկեղծ զգացումներով՝

**Համազգայինի Հայ կրթական եւ մշակութային
միութեան Հայաստանի գրասենեակ**

Հայաստանի Կինեմատոգրաֆիստների միութիւնը խոր վշտով ընդունեց հայ տաղանդաւոր ռեժիսոր, լիբանանահայ թատրոնի հիմնադիր՝ Վարուժան Խտըշեանի մահուան լուրը:

Վարուժան Խտըշեանը ստեղծագործել է թէ՛ Հայաստանում եւ թէ արտասահմանում, բայց մշտապէս պահպանել է իր ստեղծագործական կապերը հայաստանեան մշակոյթի գործիչների հետ: Դժուար է թերագնահատել նրա դերը հայ թատերական արուեստում:

Յարգելի տիկին Անժելա, ընդունեք մեր խոր ցաւակցութիւնները: Վարուժան Խտըշեանի վառ յիշատակը ընդմիշդ կը մնայ մեր յիշողութիւններում:

Հայաստանի Կինեմատոգրաֆիստների
(Շարժապատկերի գործիչներու)
միութեան Նախագահ՝ **Ռուբէն Գեորգեան**

Ցաւով տեղեկացանք ականաւոր բեմադրիչ եւ դերասան Վարուժան Խտըշեանի մահուան մասին:

Նա տաղանդաւոր արուեստագետ էր, թատրոնի անմնացորդ նուիրեալ, մեծ եղաւ նրա նշանակութիւնը Լիբանանի թատերական կեանքում:

Յարգելի տիկին Անժելա, ընդունեք մեր խորին վշտակցութիւնը մեր ընկերոջ մահուան կապակցութեամբ:

Ցաւակցում ենք Վարուժան Խտըշեանի բոլոր հարազատներին եւ բիրաւոր երկրպագուներին:

**Երեւանի Հր. Ղափլանեանի անուան դրամատիկական թատրոնի
գեղ. խորհրդի անունից՝
Արմէն Խանդիկեան, Արթուր Ութմազեան, Գուժ Մանուկեան**

Երեւան 2016 թ. յունուարի 25

Տիկին Անժելա Խտըշեանին,
Վարուժան Խտըշեանի այրիին

Սիրելի Անժելա,

Սրտի խորը կսկիծով իմացայ ամուսնուդ, մեր շատ սիրուած ընկեր, մեծ արուեստագետ եւ ականաւոր հայ գործիչ Վարուժան Խտըշեանի մահուան գոյժը: Զեզ, եւ բոլորիս համար դա անդառնալի կորուստ է, քանի Վարուժանի պէս մարդու, ամուսնու, արուեստագետի, երկիրը յաճախ չի ծնում:

Մաղթում եմ քեզ ուժ եւ կորով այդ անդառնալի կորուստը յաղթահարելու համար: Գիտեմ որ ծանր է, բայց կեանքը շարունակելու ուժ պէտք է գտնես մէջդ եւ ապրես՝ յանուն Վարուժանի յիշատակի:

Համբուրում եւ գրկում եմ:
Քո Նելլի Սարգսեան, Սօս Սարգսեանի այրի
Ինձ միանում է Նաեւ Արսէնը եւ իր ընտանիքը:

Վիեննա, 29 դեկտեմբերի, 2015 թ.

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԵՆ ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷԶԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Քամիլ Սալամէ: Ազնուական մը եւս կը հեռանայ:

Փոլին Հատատ: Պրն. Վարուժանը մեծ կորուստ է:

Ալի Հասան Ժապեր: Հաւատարիմ պիտի մնանք թատրոնի քու դարաշրջանիդ, կեանքին եւ քու խորքիդ մէջ անմահ արժեքներուն: Ցաւերժական խաղաղութեան եւ արքայութեան արժանանաս, Վարուժան:

Նատա Ապուտ: Մե՛ղք, կարեւորագոյն անձն էր, ան շատ համեստ էր ու իր իրաւունքը չստացաւ:

Ռոմէո Հաշեմ: Զեզ սիրեցինք ու պիտի մնանք քեզ սիրողները, քո նմանները միայն կը սիրուին ու չեն մոռացուիր, ապառո՛ո... Վարուժ ապառո՛ոո:

Օկոսթին Սաապ (Վենեզուելլա): Կ'աղօթենք իր հոգւոյն լոյս:

Շէխ Զամալ Սրուր (Զինչասա): Արժանի է հաւատարմութեան:

Փոլ Զարամ: Պատիւը ունեցայ իրեն հետ աշխատելու ու չեմ մոռնար իր նկատողութիւնները, Աստուած հոգին լուսաւորէ:

Պութրոս Ղալի: Թատրոնի, բանաստեղծութեան եւ արուեստի եւ բանի վարպետ:

Ժամիլ Մոալեմ: Զանի որ մեծանուն անձերու ուսուցիչ եղած է, անոր բիր յարգանք, քանի որ եղած էր հաւատարիմ ուսուցիչ, հոգիին ողորմութիւն:

Ասատ Ղանտուր: Խորին ցաւակցութիւն՝ մեծ կորուստին համար:

Հեռաձայնով ցաւակցութիւն յայտնեցին Սուրիայէն՝ Օմար Չազա, Ապտուլ Ռահման Պրաքի, Միացեալ Նահանգներէն՝ Էլի Զեսրուանի եւ Նաամի Պատաուի, Փիեռ Շամուն, Միրէյ Փանոսեան, Հատի Խալիլ, Հալա Հաքիմ, Ղասսան Հատատ, Ռատուան Համզէ, Հասան ՄոհիԷտտին, Ապտուլ Ղանի Համզէ եւ Ֆայէք Համիսի:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես Վարուժանին ծանօթացայ նախ եւ առաջ Լիբանանեան պետական համալսարանի դասախօսներուն եւ իր աշակերտներուն ընդմէջէն: Վարուժան ո՛չ միայն համահայկական արուեստի արժէք մըն է, այլ նաեւ լիբանանեան եւ միջազգային է: Անոր պատրաստած դերասանները՝ ըլլան հայ կամ օտար, այդ արժէքին մեծագոյն չափանիշները կը մարմնաւորեն:

Վարուժան այն արժէքն է, որ «Յայկականը» պարտադրեց օտարին եւ միջազգայինին մէջ անոր տուաւ բարձր տեղ:

Վարուժանի պատրաստած սերունդները մեծագոյն վկայութիւններն են անոր «Մեծ վարպետ» ըլլալուն:

ՅԱԿՈՒ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

* * *

Անձնական ծանօթութիւնը չէ, որ զիս կը կապէ Վարուժանին, այլ՝ իր թատրոնը:

Բեմական գործակցութիւնը չէ, որ կը կապէ զիս Խտըշեանին, այլ՝ իր թատրոնը:

Վարուժան Խտըշեանին թատրոնն է, որ կը կապէ զիս այն «Խենթութեան», որ կը կոչուի թատերական ասպարէզ:

Դերասան եւ բեմադրիչ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

* * *

Վարուժան Խտըշեան առանցքային դեր ունեցաւ լիբանանահայ թատրոնի պատմութեան մէջ: Ան առաջիններէն էր, որ հայախօս թատրոնը իրապաշտ յանդգնութեամբ մը դուրս բերաւ նեղմիտ ու հնաոճ նիւթերու շատախօսութենէն:

Դրսեւորեց առանձնայատուկ ոճ եւ իր բեմական ստեղծագործութիւններուն տուաւ հասցէ:

Ինքնուրոյն էր իր մարդկային եւ ստեղծագործական կենսագրութեան մէջ... համարձակ, արարող եւ «Խենթ»:

Վարուժան արուեստագետը իր ողջ էութեամբ ներծծուած էր բեմական փոշիով՝ թէ՛ որպէս դերասան, եւ թէ՛ որպէս բեմադրիչ: Ան լիբանանահայ թատրոնի քրմապետներէն էր, ու իրմէ անպայման բան մը պիտի մնայ բոլորիս մտքին ու խղճին մէջ:

Ան հեռացաւ մեզմէ՝ վիրաւոր ու հպարտ, յաղթողի դափնեպսակը գլխուն:

Բարի ճանապարհ, «Խըտըշ»:

ՎԱՉԷ ԱՏՐՈՒՆԻ

* * *

Մեծ ցաւով ու սրտի անասելի կսկիծով տեղեկացայ իմ սիրելի ընկերոջ, բարեկամի, տաղանդաւոր դերասանի եւ բեմադրիչի անժամանակ ու անսպասելի կորստի մասին: Մեզանից հեռացաւ մի անփոխարինելի, հրաշալի իսկական հայ մարդ-արուեստագետ, որի բացակայութիւնը, նրա անունն ու վաստակը թատերական արուեստի բնագաւառում յաւերժ կը մնայ իր հետ երբեմնի առնչուող եւ նրան մօտիկից ճանաչող ընկերների սրտերում...

... Իմ ծանօթութիւնը եւ առաջին հանդիպումը Վարուժի հետ 1979 թուին էր, երբ, որպէս սփիւռքահայ բեմադրիչ, Զրաչեայ Ղափլանեանի կողմից հրաւիրուեց Երեւանի Տրամաթիքական թատրոն, որտեղ Վարուժանը իրականցրեց Նիլ Սայմընի «Չքօսայգում ոտաբոյսիկ» **փիլեսի** բեմադրութիւնը:


Դիտելով մեր թատրոնի խաղացանկի գրեթէ բոլոր ներկայացումները (դերասանների ընտրութիւն կատարելու համար)՝ որոշեց իր ներկայացման դերասանական կազմը: Վիոլեթա Գեորգեան, Գուժ Մանուկեան՝ որպէս գլխաւոր դերակատարներ, նաեւ Էմմա Վարդանեան, Իշխան Ղարիբեան՝ շատ յայտնի անուններ թատերական կեանքում: Ստացուեց անմման, գողտրիկ մի ներկայացում, որի մասին իր դրուատանքի խօսքը ժամանակին ասել է յայտնի թատերական քննադատ Լեւոն Զախվերդեանը:

Թող ներուի անկեղծութիւնս, թերահաւատ էի մի բեմադրիչի նկատմամբ, ում հետ առնչութիւն չէի ունեցել, ծանօթ չէի նրա ստեղծագործական կարողութիւններին: Սկսուեցին աշխատանքները եւ այդ ընթացքում կամաց-կամաց ինձ համար ի յայտ եկաւ իր մասնագիտութեանը անթերի տիրապետող, բանիմաց, մեծ երեւակայութեամբ օժտուած արուեստագետ, ում արւեստագետի խառնուածքը համահունչ էր եւ մօտ իմ խառնուածքին:

Չորս տարի անց՝ 1983-ին, տեղի ունեցաւ մեր նոր համատեղ աշխատանքը հեռուստատեսութեամբ: «Կենտ զոյգը», դարձեալ Նիլ Սայմըն՝ Վարուժանի հայերէն թարգմանութեամբ:

Չեմ ասի անսպասելի էր ներկայացման յաջողութիւնը, որը շաղախուած էր բեմական հնարքներով, հումորով, միզանսցեններով եւ անսպառ երեւակայութեամբ: Ներկայացման մէջ ուղղակի փայլեց Ֆելիքսի դերակատարմամբ վաղամեռիկ արուեստագետ Ազատ Գասպարեանը:

Վարուժան Խտըշեան անունը յայտնութիւն էր թատերասերների շրջանում ընդհանրապէս եւ թատրոնների համար մասնաւորապէս: Դետեկցին հրաւերքներ Սուրուկեանի անուան մայր թատրոնից, Լենինականի տրամաթիքականից, որոնցում նա հանդէս եկաւ նոր բեմադրութիւններով, բոլորն էլ՝ վարուժանական, բոլորն էլ՝ թարմ մեկնաբանութեամբ, նորովի, հետաքրքիր:



Մեր մէջ փոխադարձ սերտ կապ ստեղծուեց, կարծես գտել էի համախոհ բեմադրիչից, որի հետ կը ցանկանայի կապել իմ հետագայ թեմական գործունեութիւնը: Ապարդիւն յոյսեր. կային խանգարիչ հանգամանքներ՝ մի կողմից նրա տեղացի չլինելը, միւս կողմից՝ անսպասելի ֆիզիքական հարուածը...

Անհաշիւ էին մեր հանդիպումները աշխատանքից դուրս: Զանոյքով էի հիւրընկալում իր տանը: Ամոռանալի են այդ օրերը: Ուներ բազմաթիւ հիւրեր, որոնց խանդավառութեամբ էր ընդունում, հիւրասիրում աննման Անժելան՝ կինը: Միշտ ժպտերես, հիւրասէր, անմնացորդ նուիրուած իր ամուսնուն: Ասում են՝ մարդուն ճանաչում են նեղութեան պահին: Վարուժանը շատ հարուածներ ստացաւ կեանքում, հոգեկան ապրումներ՝ որքան ուզես, բայց մնաց լաւատես, կեանք սիրող: Անժելան, Վարուժանի ծանր պահերին, մնաց անտրտուն, հաւատարիմ իր խաչին, միշտ նրա կողքին միջեւ... Շնորհակալութիւն քեզ, սիրելի՛ Անժելա: Միութարուիր նրանով, որ դու արեցիր հնարաւորն ու անհնարինը կողակցիդ կեանքը երկարածելու համար: Բայց կեանքը անողոք գտնուեց նրա հանդէպ: Նման պայծառ, անձնաւորութեանը ճակատագիրը պարզապէս իրաւունք չունէր նրան դիպչելու: Յիշում եմք ու պիտի միշտ յիշենք այդ վառ անհատականութիւնը, տաղանդաւոր մարդ-արուեստագետին՝ Վարուժան Խտըշեանին...

Հայաստանի ժողովրդական արուեստագետ ԳՈՒԺ ՄԱՆՈՒԿԵԱՆ

* * *

«ԹԱՏՐՈՆ 67» ծնունդ առաւ մեր իրականութենէն, սնունդ տուաւ մեր իրականութեան: Արուեստին, գեղեցիկին ու թարմին հուրով ու շունչով վարակեց արուեստասէր նոր սերունդը՝ նոր ուղի մը բանալով սփիւռքահայ թատերական կեանքէն ներս:

Լոնտոնէն վերադարձին, ուր գացած էր մասնագիտանալու, Վարուժան դատարկ ավերով չմտաւ «Տուն»: Ի վերուստ իրեն շնորհուած ձիրքը տասնապատիկ բազմապատկած, արժեւորած՝ ներկայացաւ մեզի, իբրեւ Աւետարանի «Մշակ առանց ամօթոյ»: Վարուժան իր վերելքին ճանապարհին մեզ եւս բարձրացուց, մեր համեստ թաղերուն մէջ, անոնց բեմերուն վրայ կեանք տալով միջազգային թատերական տիպարներու, այդպիսով մեզ տեղեակ պահելով թատերական միջազգային աշխարհէն ներս կատարուող իրադարձութիւններուն:

Տասնամեայ իր յարատեւ եւ անխոնջ աշխատանքով Վ. Խտըշեան արժանացաւ յատկապէս լիբանանահայ եւ սուրիահայ գաղութներու համակրանքին:

Յաւուր պատշաճի խօսքեր չեն մեր արտայայտածը, այլ՝ անկեղծ թատերասերի համոզում. օր մը, տեղ մը, հարկ էր որ ըսուէին այս խօսքերը՝ իբրեւ ճշմարտութեան վկայութիւն: Ուրախ եմք, որ այս առիթը ընծայուեցաւ մեզի: Նոր տասնամեակներու բարգաւաճ վաստակի մաղթանքներով՝

ՇԱՅԱՆԴՈՒՆՏ

* * *

Պէյրութահայ թատրոնը Լիբանանի տխուր դէպքերը կանխող տասնամեակին բոլորեց շրջան մը՝ արագ վերելքի: Այդ արդիւնքը ապահովող երախտաւորներու առաջին գիծին կու գայ դէմքը Վարուժան Խտըշեանին:

Ազգերու գրականութենէն փոխադրած ու բեմադրած իր գործերով յաջողեցաւ ո՛չ միայն նպաստել հանդիսատեսներու ճաշակին բարձրացման, այլեւ՝ վտարել բեմերէն հնոտիները մեր աւանդական խաղացանկին:

Բեմայարդարումի, ինչպէս՝ խաղարկութեան ու տրամախօսութեան մէջ, երեւան բերաւ ճանաչելի ոճ մը, որ եթէ չտուաւ մեր բեմին հայեցի դրոշմ, դարձաւ ուշագրաւ իր ինքնուրոյնութեամբ:

Ներկայացումներու երթալը բարեգործութեան հետ շփոթող մեր հասարակութեան մէջ թատրոնը հոգեկան պահանջ, միտքի վայելք դարձնող յաղթանակը արդիւնքն է, կը կարծեմ, որքան բեմադրիչին հմտութեան, ճաշակին, բովանդակալից երկերու խղճամիտ մատուցման, նոյնքան նաեւ ասպարէզին հանդէպ իր սիրոյն եւ անոր հաշուոյն յայտնաբերած իր նուիրումին:

Վարուժանին մէջ, արուեստագետին չափ, կը սիրեմ ես մարդը՝ սիրոյ եւ նուիրումի:

ՎԱՅԷ-ՎԱՅԵԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ

1. 1957 թ.- «Կարենոր ժողով մը» - (Ն. Պեշիկթաշըլեան)
2. 1966 թ.- «Պեպո» - Գ. Սունդուկեան
3. 1968 թ.- «Յոթելեան մը», «Կարապի երգը», «Ամուսնութեան առաջարկ մը», «Արջը» - Անտոն Զեխով
4. 1969 թ.- «Սալեմի վիուկները» - Ա. Միլլըր
5. 1969 թ.- «Մեծ Վարպետ Սոլնես» - Զ. Իբսեն
6. 1970 թ.- «Յարդէ գլխարկ» - Է. Լապիշ
7. 1971 թ.- «Վերակացուն» - Զ. Փինթըր
8. 1971 թ.- «Ո՞վ է վախճողը Վիրճինիա Վուլֆին» Էտուըրտ Օլբի 1972 թ.
9. 1972 թ. «Մարա Սատ» - Փինթըր Վայս
10. 1973 թ.- «Արեւելեան Ատամաբոյժը» - Յ. Պարոնեան
11. 1974 թ.- «Կենդանաբանական պարտեզի պատմութիւն» Է. Օլբի
12. 1974 թ.- «Գիշեր մը դուրս» - Զերլտ Փինթըր
13. 1974 թ.- «Վենետիկի վաճառականը» - Ուիլիամ Շեյքսպիր
14. 1975 թ.- «Յարդէ գլխարկ» - Է. Լապիշ
15. 1977 թ.- «Կոճատ զոյգը» - Նիլ Սայմըն
16. 1978 թ.- «Ալաֆրանկա» - Յակոբ Պարոնեան
17. 1978 - 1979 թ - «Հանրային պարտեզին մէջ բոպիկ» - Նիլ Սայմըն
18. 1979 թ.- «Զբօսայգում ոտաբոպիկ» - Նիլ Սայմըն - (Հայաստան դրամատիկական)
19. 1980 թ.- «Ալաֆրանկա» - Յ. Պարոնեան - Լենինականում
20. 1982 թ.- «Հանրային պարտեզին մէջ բոպիկ»- Նիլ Սայմըն
21. 1983 թ.- «Կենթ զոյգ» - Նիլ Սայմըն Հայաստան - Հեռուստատես.
22. 1983 թ.- «Ո՞վ է վախճում Վիրճինիա Վուլֆից» Է. Օլբի - Հայաստան (Սունդուկեան)
23. 1985 թ.- «Կամուրջէն դիտուած» - Արթըր Միլլըր
24. 1986 թ.- «Շեփորդ հնչեցուր» - Նիլ Սայմըն
25. 1987 թ.- «Հայաստանի լեռներու սրնգահարը» - Համաստեղ
26. 1988 թ.- «Հին Աստուածներ» - Լ. Շանթ
27. 1989 թ.- «Գիշեր մը դուրս» - Զերլտ Փինթըր
28. 1989 թ.- «Կենդանաբանական պարտեզի պատմութիւն» - Է. Օլբի
29. 1990 թ.- «Զեխովեան Ծիծաղ» - Անտոն Զեխով (Այնճար)
30. 1991 թ.- «Զեխովեան Ծիծաղ» - Անտոն Զեխով - (Պէյրուի)
31. 1991 թ.- «Եսի մարդը» - Լ. Շանթ
32. 1993 թ.- «Բոլոր զաւակներս» - Ա. Միլլըր
33. 1994 թ.- «Օսքար» - Զլոտ Մանիէ
34. 1995 թ.- «2-րդ պողոտայի բանտարկեալը»- Նիլ Սայմըն
35. 1996 թ.- «Երկնքի ճամբով» Յ. Օշական
36. 1997 թ.- «Գինը» - Արթըր Միլլըր
37. 1997 թ.- «Պրիզպանի գաղթականը» Ժորժ Շնիաուէ
38. 1998 թ.- «Շէրի Նուար» - Ֆրանսուա Գամփօ
39. 1998 թ.- «Ցանկայարոյցներու վերջինը» Նիլ Սայմըն
40. 1999 թ.- «Կայսր» - Լ. Շանթ
41. 1999 թ.- «Բլրեցի Եփփէն» - Լուտփիկ Հոլպերկ
42. 2000 թ.- «Մինչեւ Ուր» Յ. Օշական



Շատ մը ներկայացումներ խաղցուած են Սուրիա (Հալէպ), Կիպրոս (Նիկոսիա), Պ. (Թեհրան) հայրենիքի մէջ բեմադրուած է 5 ներկայացում արաբներու հետ Լիբանան. 3 ներկայացում Մունիր Զարուանիի հետ, թարգմանած է 22 փիես անգլերէնէ, հայերէն, 20 տարի դասաւանդած է Լիբանանի Պետական համալսարանը, պարգեւատրուած է

- 1) Պետրոս Ադամեան շքանշան (Հայաստան)
- 2) Մ. Մաշտոցի շքանշան Արամ Ա. վեհափառ
- 3) Սինեմայի եւ թատրոնի սենտիքայի կողմէ Լիբանանի մրցանակ
- 4) Լիբանանի Պետական համալսարանի կողմէ մետալ ոսկեգօծ մետալ՝ «Ի գնահատանք ձեր ծառայութեան եւ նուիրումին՝ Լիբանանեան համալսարանի Գեղարուեստի կաճառին»:
- 5) Համազգայինի Կեդրոնական վարչութիւն
- 6) Արտաւազդ թագաւորի մրցանակ (Հայաստան)
- 7) Ամենայն հայոց Գարեգին Բ.-էն շքանշան (Ս. Սահակ - Ս. Մեսրոպ)
- 8) Հայաստանի մշակոյթի նախարարութեան ոսկի մետալ

ԽՏԸՇԵԱՆԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ



Միեր Մկրտչեանի եւ Զաւէն Խտըշեանի հետ

Լիբանանի մէջ ճեմարանէն ետք, վաճառականական ասպարէզս ձգելով մեկնեցայ Լոնտոն ուսանելու: Եւ ինչպէս արդէն նպատակադրած էի, ուսումս աւարտելէ անմիջապէս յետոյ, 1967-ին վերադարձայ Լիբանան, որպէսզի ձեռք ձգած փորձառութիւնս թատրոնի ճամբով նուիրեմ ժողովուրդիս:

* * *

Լիբանանահայ թատրոնը ողջ պահելու ձգտում մը ունէի. կ'ուզէի միջազգային արժէքներ ներկայացնելով բարձր ճաշակ մը հրամցնել եւ թատրոնի նկատմամբ սերն ու համակրանքը զարգացնել հասարակութեան մէջ:



Ճորճ Սարգսեանի հետ

Զեմ մոռնար, երբ օր մը հանգուցեալ Միեր Մկրտչեանը ներկայացման աւարտին եկաւ, գրկեց զիս եւ ըսաւ. «Դու ինչքան ես սիրում քո դերասաններին»: Այն ատեն չանդրադարձայ, թէ ինչ կ'ըսէ: Սակայն այսօր կը հաստատեմ, թէ ես շատ երախտապարտ եմ իմ դերասաններու, որովհետեւ անոնք կը փոխանցեն այն ինչ որ իմ հոգիէս կը բխի եւ ատիկա մեծապէս կը բաւարարէ զիս:

* * *

Կ'ենթադրեմ, թէ եկեղեցւոյ եւ դպրոցի, այսինքն մեր հաւատքի եւ ուսման կեդրոններուն կողքին, նոյնքան կարենոր է թատրոնի դերը՝ ազգապահպանման ուղղութեամբ: Թատրոնի միջոցաւ կը փոխանցուի ե՛ւ հաւատք, ե՛ւ լեզու, ե՛ւ պատմութիւն, ե՛ւ գրականութիւն: Թատրոնը անմիջական կապ կը ստեղծէ ժողովուրդին հետ: Թատրոնը երբեք չի մեռնիր, ան կեանքի անբաժան մասն է: Իմ կարծիքով թատրոնի միջոցով պէտք է փոխանցել լաւը, առաքինին: Հիմզիմովներու թիւը շատ է, անոնք միշտ կան, սակայն պէտք է քաջալերել Պեպոյի նման լաւ յատկութիւններով տոգորուած տիպարները:

* * *

«Սալեմի վիուկները» ընտրեցի քանի մը պատճառներով: Նախ՝ մարդկային ներաշխարհիս ամբողջական դրսեւորումը կը ներկայացնէ անիկա ինծի համար եւ յետոյ, բռնազբօսիկ չթուի, երբ ըսեմ, թէ հայութիւնս պատճառեղաւ որ ամբողջ խորութեամբ զգամ անոր էութիւնը: Գործադրուած հալածանքները, աքսորները, բանտարկութիւններն ու ոճիրները, արդարութեան վրայ բիրտ ուժին բանեցուցած ճնշումները շօշափուած են «Սալեմի վիուկները» թատերախաղին մէջ եւ ատոնք զգալի դեր մը կատարեցին նախընտրութեանս մէջ:

* * *

Յետոյ դժուարութեան մը բախելու սերը: Մեր հասարակութեան մէջ աւելի պարզ կտոր մը ներկայացնելը թերեւս աւելի հաճելի պիտի թուէր հանդիսատեսին, բայց դիւրին գործեր ընելու անձնապէս շատ տրամադիր չեմ:

ԻՄ ՍԻՐԵԼԻ...

Շարունակում Ա. Էջեն

Մի ուրիշ օր որոշեցինք Թիֆլիս գնալ, Ստեփան Ջրբաշեանի երկու քույրերը կ'ապրեին Թիֆլիսում, Ռուստամելի գլխավոր փողոցը, «Իվերիա» հիւրանոցի մօտ: Ստեփան Ջրբաշեանը հորաքրոջս ամուսինն էր, անուանի հայ երգահան: Խորհրդային օրերին ոչ մի սփիւռքահայ չէր կարող առանց վիզայի Յայաստանի սահմանները խախտել: Երբ Թիֆլիսից հեռաձայնեցի Վարուժանին, իր հայաստանցի տանտերերը իմացան, թէ ո՛ւր էի բնակում Թիֆլիսում, Վարուժանը ասաց. «Վաղը ժամը 1:00-ին «Իվերիա» հիւրանոցի մօտ»: Չէի հաւատում, որ Վարուժանը կարող էր գալ, որովհետեւ վիզա չունէր եւ կարող էր բարդութիւնների մէջ ընկնել, մի՛ մոռանաք, որ Խորհրդային Յայաստանի օրերին ենք: Բայց եւ այնպէս յաջորդ օրը ես «Իվերիա» հիւրանոցի առջեւն էի, 19-20 տարեկան էի եւ ժամանակ, եւ կարելի չէր երկար պտտուել հիւրանոցի առաջ, տղամարդիկ կարող էին սխալ մեկնաբանել: Եւ սկսեցի հիւրանոցին շուրջը դառնալ, երբ յանկարծ Վարուժանը դէմս ելաւ... Այո՛, իմ սիրելի Վարուժանը ինձ համար խախտած էր սահմանը՝ պարզապէս փաստելու համար իր սերը:

Վերջերս Արփի Տատոյեանը՝ «Ո՛վ է վախճողը Վիրճինիա Վուլֆէն» թատերախաղի գլխավոր դերակատարը, որ ներկայիս ապրում է Միացեալ Նահանգներում, ինձ մի նամակ ուղարկեց՝ ասելով, որ ինք շատ շնորհակալ էր Վարուժանից, որ իրեն վստահել է, թէ իր ամենալաւ գրութիւնները քեզի ուղղուած նամակներն են, Անժելա: Իսկ ես հիմա կ'ասեմ. «Յպարտ եմ, որ Վարուժան Խտըշեանի լաւագոյն զգացմունքներին եւ մտքին եմ արժանացել»: Ես մինչեւ օրս պահում եմ այդ նամակները մասունքի պէս, որոնցից մէկը միայն հազար էջանոց է...

Ի պատասխան իր սիրոյ, տարիներ տրամադրեցի հաւաքելու համար Վարուժանի արխիւները... 19 քիւօ կը կշռէն երկու խոշոր ալպոմներ, որոնց մէջ ամփոփուած են Վարուժանի թատերական ներկայացումների յայտարարութիւնները, Վարուժանի արուեստի մասին, զանազան լեզուներով յօդաձեւերը՝ հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, անգլերէն, պարսկերէն: **Օրիժի-նալները** տարել եմ Յայաստան եւ դրել Յայաստանի թատերական թանգարանը, Սօս Սարգսեանի օգնութեամբ: Եւ դրանց օրինակներն էլ պատրաստել եմ լիբանանահայութեան համար:

Վարուժանին միայն ես չէի, որ սիրում էի: Անդրանիկ Ծառուկեանը «Նայիրի»-ին մէջ մի առիթով գրել է. «Վարուժանի ճակտին գրուել է՝ սիրեցեք զիս»: Եւ Անդրանիկը ճիշդ էր, Վարուժանը ընկերութիւն կ'անէր բոլորի հետ, ամենապարզ մարդկանցից մինչեւ ամենանշանաւորը: Եւ իր ընկերները բարեկամները իսկապէս որ կը սիրէին զինք, Վիգէնը՝ Դարբինեան, Չաւենը՝ Պաաքլինի, Պողոսը, Յովսէփը՝ Գափլանեան, Յակոբը Գալայճեան, Մարի Ռոզը՝ Մանուկեան, Սօսին՝ Մանուկեան, Լեւոնը՝ Յրեշտակեան, Ժանոն՝ Պէքերճեան, բոլորը, անխտի՛ր բոլորը, որոնք մինչեւ Վարուժանի մահը մնացին հաւատարիմ, մօտիկ ու սիրելի իրեն, իրանց այցելութիւններով, օգտակարութիւններով, չլքեցին զինք ոչ մի ժամանակ:

Մի օր Արփին Մովսիսեանը, որ աշխատում էր Յայաստանի հեռուստատեսութեան մէջ, տեսնելով Վարուժանին առաջին անգամն ըլլալով՝ ասաց. «Պարոն Խտըշեան, ձեր տեսակը հիմա չկայ այլեւս, գիտե՞ք». եւ իրապէս Վարուժանը շատ աղուոր գլուխ ուներ, առատ մազերով, մեղրագոյն աչքերով եւ ճերմակ մորթով: Երբ հարցրեց՝ ո՞ր տեսակը, Արփենը պատասխանեց՝ եղ մաքուր, մտաւորական, զուլալ հայու տեսակը:

Վարուժանը իսկական հայ էր, իր ամբողջութեամբ: Մի օր հարցրի նրան. «Վարուժա՛ն, ինչո՞ւ Անգլիա չմնացիր, ինչո՞ւ պատերազմ է, շատ հնարաւորութիւններ չկան շքեղ բեմադրութիւնների», ինք ըսաւ. «Ես վերադարձայ Լիբանան, որպէսզի հայերէն բեմադրեմ»: Եւ իրապէս ինք թատրոնի միջոցով հայոց լեզու պահեց սփիւռքում, սերունդներ կերտեց, հայերէն խօսիլ սորվեցրեց, նախադասութիւնների մէջ ճիշդ շեշտադրումներով խօսիլ սորվեցրեց: Այդ էր Վարուժանի առաքելութիւնը: Ինք իր երկու կիներուն էլ հայերէն խօսել սովորեցրեց, մէկը՝ անգլիացի, միւսը ռուսախօս:

Տարիներ առաջ ֆրանսահայ մամուլին մէջ, Փարիզում, Վարուժանը ասել է. «Ամենամեծ հաճոյքս այն է, որ հայրենիքիս մէջ, հայրենի ժողովուրդիս կողմէ գնահատուեցայ»: Միլվա Կապուտիկեանը «Կարաւանները դեռ քայլում են» գրքի մէջ էսպէս է գրել. «Վարուժանը ներս մտաւ իր հետ բերելով՝ աղմուկ, բորբոքուածութիւն, աչքերի փայլատակում, ժպիտ ու կատակներ, իսկական արուեստագետ»:

Երազում էր Ղարաբաղը տեսնել եւ մի օր իր լաւագոյն հայաստանցի ընկերը՝ Վարազդատը, որ ներկայիս յայտնի լրագրող է Նորվեկիոյ մէջ, տարաւ մեզ Ղարաբաղ... Որքան մեծ էր



մեր բոլորի զարմանքը, երբ Գորիսում հիւրանոցի տնօրէնը, որ Գերմանիայէն վկայեալ մի բժիշկ էր, տեսնելով Վարուժանին՝ բացագանչեց՝ «Վարուժան Խտըշեան». անմիջապէս ճանաչեց եւ պարզուեց, որ ժամանակին տեսնուել են Պարսկաստանում... Ա՛յ քեզ բան: Շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Լաչին: Յոն մի ուրիշ, դարձեալ բժիշկ, ակնաբուժ Յալեպէն, ան եւս զարմացած՝ «Վարուժա՛ն», պարզապէս հիանալի էր, բոլորս միասին տօնեցինք Վարուժանի տարեդարձը Լաչինի մէջ, մի գետի ափին: Այդ գետի քարերը եւ բերել եմ հետս Պէյրուօ եւ մինչեւ օրս էլ պահում եմ:

Մեր Ղարաբաղի պտոյտը շարունակեցինք դէպի Ստեփանակերտ, յոգնած էինք եւ որոշեցինք գիշերել «Նայիրի» հիւրանոցում: Այս ազամ մենք ուղղակի ապշեցինք, երբ հիւրանոցի տնօրէնը, որ Աւստրալիայից էր, ան եւս Վարուժանին ճանաչեց: Պարզուեց, որ Անդրանիկ Ծառուկեանի աշակերտն էր եղել Յալեպում: Ուրկի՛ց ուր... Երկու օրուայ ընթացքում Յայաստանի հողի վրայ, թէ Ղարաբաղի մէջ Վարուժանին ճանաչում էին եւ բոլորն էլ՝ սփիւռքահայեր:

Քանի որ խօսեցի Վարուժանի լաւ հայ լինելու մասին, կ'ուզեմ նշել, որ Վարուժանն էլ Յայոց ցեղասպանութեան հարիւրամեակը նշում էր իրեն իւրայատուկ ձեւով, անկողնու մէջ, երբ արդէն չէր կարող խօսել, սակայն հայու յուզուած աչքերը կը խօսէին եւ չէր թողնում, որ անմոռուկը կրծքից հանէի... Երբ շապիկները փոխում էի, պարտադրում էր, որ անմոռուկը նորին վրայ կրկին դնէի:

Վարուժանն ինքն իր մասին ասում էր. «Չարմանալիօրէն հայ եմ եւ լիբանանցի, երբ Յայաստան կ'երթամ, Լիբանանը կը կարօտնամ, երբ Լիբանան եմ, հայրենիքս կը փնտռեմ, երբ օդանաւ կը նստիմ դէպի Յայաստան, ինքնաբերաբար արդէն իսկ օդանաւի մէջ արեւելահայերէն կը խօսիմ եւ հակառակը արեւմտահայերէն՝ Պէյրուօ վերադարձիս»:

80-ական թուականներին, Երեւանում, մի օր Յայաստանի ֆութպոլի խումբը լեհական խումբի դէմ էր մրցում: Վարուժանը իմանալով, որ իմ մեծ մայրիկը լեհ էր, շատ լուրջ դէմքով ինձ հարցրեց. «Յիմա դու որո՞ւ հետ ես՝ հայերի՞, թէ՞ լեհերի». եւ վախով պատասխանեցի. «Յայերի՛, հայերի հետ եմ»:

Վարուժանը շատ բարի էր, սա ամեն մարդ գիտի, բայց ես կ'ուզեմ նշել մասնաւորաբար իր բարութիւնը հայրենիքում: Ինք սիրում էր դրամ բաժնել... Շատ անգամ գնումներ էր անում, որոնց բնաւ պէտք չունէինք: Մի օր Վերնիսաժ էինք գնացել, մի սրճարան նստանք, Վերնիսաժ, գիտէք, մարդիկ միշտ կը պտտուեն եւ կողովներով ընկոյզ, չամիչ, կադին, հայաստանեան նշանաւոր ծիրան են վաճառում: Վարուժանը կանչեց ծախողներից մէկին եւ երկու կողով գնեց, երբ զարմացած հարցրեցի՝ ինչո՞ւ երկու կողով, ի՞նչ պիտի ընէինք, երբ տանք լեցուն ունէինք, «Ի՛նչ կ'ըլլայ, հիմա ուրիշի մը կու տանք», եւ իսկապէս ալ մի քիչ յետոյ կողովները բաժանեց անձանօթ մարդկանց:

Այս էր Վարուժանը: Պէտք է ասել, որ նոյն բնաւորութիւնը ուներ



Վիգէն Թադէւոսեանի գծած դիմանկարը

Նաեւ մեր շատ սիրելի Սօս Սարգսեանը։ Մի օր իր տանն էինք, ամէն անգամ որ Հայաստանում լինէինք Սօսի ու Նրա անմման կնոջ՝ Նելլիի հիւրասեր ու առատ սեղանն էինք վայելում, Նրա համեղ ճաշերն ու ժպտուն դէմքը լեց-նում էր մեր սիրտն ու հոգին։ Մի օր դարձեալ իրենց տանն էինք Վարուժա-նի ուշադրութիւնը գրաւեց մի իւղաներկ նկար, որի նիւթը Հաղբատի ընկղմը-ւած հայկական վանքն էր՝ Վարուժանի սիրած սրճագոյն երանգներով։ «Ի՛նչ աղուոր նկար է, Սօ՛ս», ասաց Վարուժանը, եւ Սօսը անմիջապէս հա-նեց կախուած տեղից ու նուիրեց Վարուժանին։ Ի՛նչ բարութիւն, եւ ստիպեց, որ Վարուժանը անպայման վերցնի նկարը։ Էստեղ կ’ուզեմ ասել Նաեւ, որ Վարուժանը տեսնել գիտէր, գեղեցիկը տեսնել, գիտէր գնահատել արուես-տը։ Սիրում էր նկարչութիւնը, երաժշտութիւնը, քանդակագործութիւնը, պարարուեստը, երգը... Միշտ ասում էր. «Եթէ ես չլինէի բեմադրիչ ու դերա-սան, եթէ չնուիրուէի թատրոնին, ես անպայման կ’ըլլայի երաժիշտ»։ Երաժշտութիւնը Վարուժանին կեանքն էր, իր կեանքին իմաստը, երաժըշ-տութեամբ կ’արթնանար, երաժշտութեամբ էր քնում, երաժշտութեամբ էր շնչում, նոյնիսկ Ազունիէ ազգային բուժարանի իր սենեակին մէջ, ամենա-ծանր հիւանդ պայմաններում, Mezzo (Մեցցո) երաժշտական կայանն էր դի-տում ու լսում։ Էստեղ պարտք եմ զգում գնահատանքի խօսք ասել պարոն Տիգրան Պոյաճեանին, որ յատուկ Mezzo (Մեցցո) կայանը եւ Հայաստանի տարբեր կայանները մեծ դժուարութեամբ լեռներու մէջից բերել տուեց ու զետեղեց յատուկ Վարուժանի համար։ Անչափ շնորհակալ եմ, ոչ միայն սրա համար, այլ՝ բոլոր ծառայութիւնների համար, որ պրն. Տիգրան Պոյաճեանը արեց՝ թեթեւցնելով արդէն իսկ Վարուժանի շատ բարդ ու անհանգիստ կեանքը։

Վարուժանը աւելի քան գիտէր երաժշտութիւնը, իւրաքանչիւր սիմֆո-նիայի կամ օփերայի, քառեակի կամ **ուվերթիւրի**, երգի կամ պալէի, ո’ր երաժշտական գործիքը, ե’րբ է մտնելու կամ ե’րբ է կանգ առնելու, հետը եր-գում էր եւ՝ «հիմա թաւ ջութակը պիտի մտնէ, յետոյ ջութակը» եւ Եսպէս՝ մինչեւ աւարտը։ Հօրաքրոջս հետ հայերէն երգում էր, երկրորդ ձայնով ըն-կերակցում էր, **վիպրաթօ** էր անում, թե՛ ձայնով եւ թե՛ գլխի շարժումներով, երգում էր մաքուր, ջիւշ ձայնով, չափէն դուրս զգացմունքով իսկական ար-ւեստագետ էր։

1963 թուին Վարուժանը Անգլիայում մասնակցել է The Armenian Youth Society Choir-ի (Տի Արմինիըն Եութ Սոսայիթի Քորին), որուն ղեկավարն էր յայտնի խմբավար Բաֆֆի Արմէնեանը։ Յայտագրից կ’իմանանք, որ Վա-րուժանը, ո’չ աւելի, ո’չ պակաս, Էդ երգչախմբի մենակատարն է եղել։ Տարի-ներ առաջ մի օր Վարուժանը ինձ ասաց. «Երբ կը մեռնեմ, Անժելա, իմ դա-գադիս մէջ կը դնես Ռիչարտ Վակների սի. տի-ները»։ Կը ներես, Վարուժան, Էդ մէկը չարեցի։

2012-ին, երբ կաթուած անցուց, Ժահթեուի հիւանդանոցն էինք, իր վաթ-սուն տարուան անբաժան ընկերը՝ Նուպարը՝ Մանուկեան, որ մինչեւ վերջ ալ մնաց Վարուժանի մնայուն այցելուն, հաւատարիմ ընկերը, հիւանդանոց մուտքի - ելքի տաղտկալի կարգադրութիւնները յաջողցնելու ճիգ չխնայե-լով, մինակ չթողելով զինք, այցելեց եւ Վարուժանի տրամադրութիւնները բարձրացնելու համար հարց տուեց. «Կը յիշե՞ս, Վարուժան, այս երգը» եւ սկսեց իրենց հին օրերից մի երգ... Որքա՛ն մեծ էր զարմանքս, երբ Վարու-ժանը, չնայած իր կէս անդամալուծուած վիճակին, սկսեց երգել Նուպարի հետ, եւ յանկարծ սենեակը լեցուեց հիւանդապահուիիներով, որոնք իրենց աչքերին չէին հաւատար, կաթուածահար հիւանդը ինչպէ՛ս էր, որ կ’երգէր Եւքան մաքուր եւ Եւքան յստակ, իմ ու Նուպարի աչքերից արցունքները հե-ղեղուեցին։

Վարուժանը Նաեւ ղեկավար էր։ Հիմնեց եւ ղեկավարեց «Թատրոն 67»-ը, տարիներով ղեկավարեց «Գասպար Իփեկեան» թատերախումբը։ Վարու-ժանը ծնած էր օգոստոս 15-ին, ճիշդ նոյն թուականին, որ Նափոլէոն Պոնա-փարթն էր ծնած, իրեն վիճակուած էր ղեկավար լինել։

Անգլիա ուսանած տարիներին Վարուժանը խաղաց զանազան դերեր, ինչպիսիք էին՝ King Henry 8th, Lord Chamberlain-ի դերում, Macbeth, Macbeth-ի դերում, King Henry 6th, Lord Clifford-ի դերում, Oscar Wilde-ի The Importance of Being Earnest, Միքիամի դերում, Othello Othello-ի դերում։ Ասեմ, որ Էմիլիա դերում Suzan Wright-ն էր, որ խաղաց որը յետոյ դարձաւ Անգլիոյ աստղը։

Իսկ երբ հայերէնով ներկայացրեց «Եսի մարդը» թատրերգութիւնը Լոն-տոնի մէջ, մամուլը հետեւեալը գրեց. «Թատրերգութեան յաջողութիւնը բո-լոր կողմերով անվարան կը պարտի Վարուժան Խտըշեանի ջանքերուն, լոյ-սերու խաղերը, երաժշտութեան ընտրութիւնը, ձայնի արձանագրութիւնը, դերերու ուսուցումը, բեմադրութիւնը, բոլորը վարպետօրէն ի յայտ եկան։ Հինգերորդ արարին վարագոյրը կ’իջներ վառ ծափերի տարափին տակ, կո-չերի որոտը ստիպեցին, որ վարագոյրը բացուի ու կրկին բացուի մի քանի անգամներ, պարզ ըսելով՝ սիրելի՛ Վարուժան, որ դու լուրջ, բարձր արուես-տի բոլոր ճաշակներով հարուստ թատրերգութեան մը վայելքը ընձայեցիր մեզի»։ Մօտ 300 հոգի կը հաշուէին Էդ օր սրահին մէջ, պատմական երեւոյթ էր Լոնտոնի հայ կեանքին մէջ։

Իսկ իբրեւ բեմադրիչ՝ Վարուժանը ուշադրութիւնը գրաւեց Նաեւ Զիւելի Ուքրանիոյ հասարակութեան, երբ «Ռ՞վ է վախենում Վիրճինիա Վուլֆից» ներկայացումը պայթեց Զիււում։ Թերթերի մէջ գրեցին ուքրաներէն, ռուսե-րէն, թե՛ «Ռ՞վ էր ես տղան, Եւքան արդիական բեմադրիչը»։

Այո, Վարուժանը տաղանդաւոր բեմադրիչ էր, տաղանդաւոր դերասան եւ տաղանդաւոր դերուսոյց, եւ անշուշտ կ’երագէր ունենալ իրեն գործակից նոյնպէս եւ աւելի արհեստավարժ մարդիկ իր շուրջը. «Որպէս արուեստա-գետ՝ ես ինքս կը հասկանայի, որ առաջին պայմանն էր այդ շրջապատը ու-նենալ՝ արհեստավարժ ներկայացումներ ստեղծելու համար»։ Իր ցաւը Նա-եւ իրա ոտքն էր եւ յաճախ ասում էր. «Դուք բոլորդ վագում էք, իսկ ես՝ հա-զիւ թէ քայլում։ Մոռանում էր Վարուժանը, որ մենք մեր վազքի մէջ կաղում էինք, իսկ ինք կաղալով՝ մեզանից յառաջընթաց էր։

Վարուժանը զոհն էր Լիբանանի երկար ու ծանր պատերազմին։

Շեղուելով արուեստից՝ պիտի ուզէի յիշել Նաեւ Վարուժան որսորդը։

Շատ էր սիրում Սիրիայի անապատները որսի գնալ իր սիրելի ընկերոջ՝ Ալեկին եւ կնոջը՝ Անիին հետ։ Մի օր ինձ ասեց. «Դուն ալ եկուր, Անժելա՛, կը տեսնես՝ ի՛նչ որսորդ եմ ես»։ Սկիզբը վախեցայ, յետոյ մասնակից եղայ՝ ցոյց տալով վագող նապաստակներին։ Այդ օր Վարուժանը ուրիշ Վարու-ժան էր, արուեստից դուրս մի քաջ մարդ... որսաց հինգ նապաստակ եւ եր-կու աղուես... աւարտին վառեց մի ծխախոտ եւ յաւերժացաւ նկարուելով ինքնաշարժին վրայ շարած իր որսերով։

2008-ին Երեւանում, «Կինօ Մոսկուա»-ի դահլիճում, երբ պարգեւատրում էին Նրան մի անգամից երեք մրցանակներով, եւ երբ խօսքը իրեն տրուեց, ասաց. «Եթէ Աստուած երկրորդ անգամ ինձ կեանք պարգեւէ, այս անգամ ես պիտի ուզէի ծնուել հայրենիքում»։ Ժողովուրդը ոտքի, յուզուած ծափա-հարում էր...

Է՛յ սիրելի՛ Վարուժանս, շատ են դրուագներդ՝ իւրայատուկ արտայայ-տութիւններով ու դէպքերով։ Վերջին ինն տարիներդ եղան Էնքան դաժան ու դժուար, յաջորդական վիրահատութիւններ ու չսպասուած կաթուածները տունէն հիւանդանոց արեցին առօրեադ՝ կրկին ու կրկին անգամներ գամե-լով քեզ վերջնականապէս անկողնուն ու հետզհետէ մթազնելով հորիզոնդ, որ եղել էր միշտ պայծառ ու արեւոտ։ Սփոփանքդ այս տխուր առօրեային մէջ եղան բարեկամներուդ ու բժիշկներուդ անվերապահ ու պատրաստա-կամ ծառայութիւնները, որոնք ոչ իսկ մի անգամ ձանձրոյթ կամ յոգնութիւն ցուցաբերեցին, ընդհակառա՛կը, ինքնական ներկայացան ու դիւրացրին այն, ինչ անկարելի պիտի լինէր մեր միջոցներով լուծում բերել։ Յակոբն էր, Լատոյեանը, որ իր հանդարտաբարոյ ու անթաքոյց հիացմունքով ու ծառա-յութեամբ լուծում էր հիւանդանոցային տաղտկալի բոլոր կարգադրութիւն-ներն ու համաձայնութիւնները, Էնպէս, որ կարծես բոլոր դռները բաց էին, եւ ինք պարզապէս քեզ ներս էր առաջնորդում։ Դժբախտութեանդ մէջ դու բախտաւոր էիր, Վարուժա՛ն, շրջապատուած լինելով քեզ սիրող ու քեզմով հիացող հոյակապ բարեկամներովդ, որոնք այսօր կ’ափսոսան տաղանդիդ համար, որ տակաւին այնքան պիտի ծաղկեցներ մեր ամայի ու դատարկ թատերաբեմը։

Հաւատալու չէ, որ արդէն չկաս։

Սակայն յիշատակդ միշտ վառ պիտի մնայ մեր բոլորի սրտերի մէջ։ Ես դարձայ քո պահապան հրեշտակը, դու ինձ կ’ասէիր. «Մի՛ ձգեր, Անժելա, որ մարդիկ ինձ այսքան ինկած ու հիւանդ տեսնեն», չէիր ուզի, որ քո սիրած եղ-բայրը՝ Չաւենը, տեսներ քո տառապանքը եւ քեզ հետ տառապէր։

Վարուժա՛ն, սիրելի՛ս, ես ըրի իմ կարելին, իմ խիղճը հանգիստ է։

Եւ այսօր եւս կ’ասեմ քեզ. Վարուժա՛ն, ինչպէս առաջին անգամ արեւե-լահայերէնով. «Ես սիրում եմ քեզ»։

23 յունուար 2016

Պէրրութ, Լիբանան

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ...

Շարունակուած 6-րդ էջէն

Աւելի ուշ ան հիմնեց «Թատրոն 67» խումբը եւ երկար տարիներ այդ խումբին հետ մնաց, ապա վերադարձաւ «Գասպար Իփեկեան»՝ որպէս բեմադրիչ։

Ան արդէն յաջողած էր ստեղծել թատերական ընտանիք մը՝ ամէնօրեայ ընկերային կեանքով, որ «Թատրոն 67»-էն ետք ալ շարունակուեցաւ «Գասպար Իփեկեան»-ի մէջ։

Երբ մեր մեծերը կը մահանան ու մեզմէ կը հեռանան, ցաւ ու տառապանք կը զգանք՝ անկախ իրեն հանդէպ ունեցած մեր յարգանքէն։ Թէեւ քաջ գիտենք, որ կեանքը անփոխարինելի բան չունի, գիտենք Նաեւ, որ նո-րերը կու գան աւելի հզօր, բայց երբեմն երբ չորս կողմ նայինք ու տարբեր բնագաւառներուն մէջ պարապութիւն տեսնենք, երբեմնի մեր ունեցած ար-ժէքները մեր աչքին աւելի կը մեծնան եւ ստիպուած գիրենք կ’առասպելացը-նենք։ Ո՛չ Ժորժ Սարգիսեանը առասպել էր, ո՛չ ալ Վարուժան Խտըշեանը, բայց երբ նոր ուժեր հրապարակ չեն իջներ ու չեն գրաւեր թափուր տեղերը, յաւետ հեռացողին արժէքը աւելիով կը զգանք։ Երբ հայութեան կեանքէն մեծ դեմքեր կը հեռանան, բնական է՝ որբի զգացողութիւն ունենանք։ Կը մաղթենք, որ նոր ուժեր գան ու շարունակենք մեր մշակութային երթը։

ՄԱՐՏԻԿ ՏԵՄԻՐՃԵԱՆ

ԱՆՄԱՐ ԱՍՏՂ ՄԸ...

Շարունակուած Ա. Էջէն

տագնապը եկաւ իր անբարեխիղճ ներգործութիւնը ունենալու ընդհանրապէս թատերական մեր կեանքին վրայ, ուր Վարուժը նուաճած էր նորարարի իր դիրքը: Լուսաւոր այդ օրերուն, այսինքն՝ մինչեւ 1975, Վարուժը բեմ հանեց լուրջ ու կատակերգական գործեր, բոլորն ալ՝ նոյն բծախնդրութեամբ, ի գործ դնելով իր բազմերես տաղանդը: Վարուժը դերասան էր, եղաւ բեմադրիչ՝ բառին ամենէն լայն իմաստով, որովհետեւ թատերական գործերու թարգմանիչ էր, դերուստյց, իր հեղինակաւոր խօսքը ունեցաւ բեմայարդարումներուն, զգեստներուն, դիմայարդարումներուն, լուսաւորումի-լոյսի խաղերուն եւ դէմ՝ բոլոր այն նրբերանգներուն մէջ, որոնք կը պայմանաւորեն ամբողջական թատրոնին յաջողութիւնը: «Սալեմի վիուկներ»-ուն, «Մարա Սատ»-ին, «Ռ՞վ է վախցողը Վիրճինիա Վուլֆէն»-ին, «Կամուրջէն դիտուած»-ին զուգահեռ, ան բեմ հանեց Պարոնեան, «Յանրային պարտեզին մէջ բոպիկ», «Իտալական յարդէ գլխարկը», «Վենետիկի երկուրեակները» եւ դէմ՝ շատ ու շատ գործեր, որոնց մէկ մասը իր անուան դիմաց արձանագրեցին... «դժուարամատչելի գործերու բեմադրիչ» մակդիրը:

Կարծեմ թէ 70-ականներու սկիզբն էր. գրեթէ բառացիօրէն կը յիշեմ Պէյրութի ձայնասփիւռի կայանին հայկական յայտագիրէն սփռուած իր մէկ հարցազրոյցը. հաղորդավարը հարց կու տար իրեն, թէ ինչո՞ւ «դժուար հասկնալի» գործեր կը բեմադրէր. պատասխանը եղաւ մօտաւորապէս հետեւեալը. «Ես պիտի աշխատիմ մեր թատերասերները բարձրացնել թատերական արուեստի եւ լաւ թատրոնի մակարդակին, եւ ոչ թէ հակառակը»: Եւ այդ ընելու համար ան յարատեւօրէն կապի մէջ մնաց անգլիական եւ այլ արդի թատրոններուն հետ՝ հայ թատերասերին ծանօթացնելով 20-րդ դարու եւ իրեն ժամանակակից բազմաթիւ թատերագիրներ, ընտրելով անոնց համամարդկային գործերը:

Եւ իսկապէս, Վարուժը քանի մը տարուան մէջ նոր որակ ու տարբեր հմայք ներարկեց լիբանանահայ թատրոնին, այդ հմայքը տարածեց դէպի միջինարեւելեան այլ գաղութներ, ապա նաեւ՝ Հայաստան: Բոլորովին չժխտեց նախկինը, այլ գործեց նոր քայլեր ու գիծեր արձանագրելու մղումով: Ան գործնապէս, եւ ոչ միայն խօսքով, ցոյց տուաւ, որ թատրոնը իւրայատուկ տեղ է, ինչպէս, օրինակ՝ եկեղեցին կամ յարգալիր վարմունք պահանջող որեւէ հաւաքավայր, եւ ոչ թէ՝ թեթեւ ժամանցի ժամադրավայր: Բեմին վրայ անոր ներկայութիւնն ու ահեղ դերակատարութիւնը մագնիսացնող բան մը ունէին հանդիսականին համար: Վստահ եմ՝ ինծի պէս շատեր անձկութիւն ապրելով՝ ներգրաւուած են այն ցնցող մթնոլորտին մէջ, որ ստեղծուած էր «Սալեմի վիուկներ»-ուն, «Մարա Սատ»-ին, «Ռ՞վ է վախցողը Վիրճինա Վուլֆէն»-ին ու նման գործերու բեմադրութեամբ, ու պահ մը քրտնած մատներով անզգալաբար սեղմած են աթոռին նստատեղին:



Նիկոլ Աղբալեանի դասեր հետ

Տարօրինակ «բռնատեր» մըն էր Վարուժը: Ուշադիր հանդիսականը կը զգար, որ մասնաւորաբար նորեկ դերակատարները իրենց դերը կը կատարէին այնպէս, ինչպէս նոյնինքն Վարուժը պիտի խաղար զայն: Բնական արդիւնքը եղաւ այն, որ բազմաթիւ տաղանդաւոր տղաք ու աղջիկներ կազմաւորուեցան անոր «դպրոց»-ին մէջ, բարձրացան իրեն հետ քայլ պահողի խաղարկութեան մակարդակին: Անոր փորձերուն ներկայ եղողը գիտէր, որ Վարուժը ինչպիսի՞ նշդրակներով կ'աշխատէր իւրաքանչիւր տիպարի վրայ, կը բացատրէր, թէ ինչպէ՞ս պէտք է գործածել ձայն ու շարժում, ժպիտ կամ այլ զգայարաններ: Առաւելագոյն չափով կ'օգտագործէր, օրինակի համար, «Յակոբ Տէր Մելքոնեան» կամ «Կիւլպենկեան» թատերասրահներուն կարո-



Պարեգին կաթողիկոսին հետ

ղականութիւնները: Զրտնաթոր աշխատանքի արդիւնքն ալ այն կ'ըլլար, որ իր գործերը յաճախ շաբաթներ շարունակ մնային բեմերու վրայ:

Լիբանանի տագնապը եղաւ Վարուժին վաստակը վերիվայրումներու ենթարկող գլխաւոր ազդակը: Բեմի ընկերներէն (դերասան թէ բեմին ետին աշխատող) շատեր հեռացան Պէյրութէն, որուն մշակոյթի մայրաքաղաք ըլլալու հանգամանքը նսեմացաւ որոշապէս: Շուտով բեմերը ողողուեցան աժան «զուարթաբանութիւն»-ներով, ուր խնդուքի մուրացկանութիւն տեղի ունեցաւ վրան-բաց արտայայտութիւններով, մինչեւ անգամ հայիոյանքի առատ գործածութեամբ (ի դէպ, սա միայն լիբանանեան թատերական աշխարհին յատուկ երեւոյթ չէր, մեծ մասամբ ներածուած էր Արեւմուտքէն, որովհետեւ մինչեւ այսօր ալ, դժբախտաբար, նաեւ Հայաստանի մէջ, ինչ որ «դուրս»-էն կու գայ, հալած իւղի պէս կը ներածուի ու կը մատուցուի առատօրէն՝ քանդելով ճաշակ ու սերունդներ): Եղաւ պահ մը, երբ Վարուժն ալ ստիպուեցաւ կրելու այդ ազդեցութիւնը. Պարոնեանի մէկ գործին բեմադրութեան առիթով, յանդուգն, խարանող էր եւ ճակատաբաց՝ անոր մէկ արտայայտութիւնը: ... Բեմը բացուած էր իբրեւ թէ լուրջ եւ խորհրդաւոր պատկերով մը, ուր դերասանները վերամբարձ արտայայտութիւններով կը խօսակցէին: Յանկարծ Յակոբ Պարոնեանի նման շպարուած տիպար մը բեմ բարձրացաւ սրահէն եւ հարց տուաւ, թէ ի՞նչ կ'ընէին. Վարուժին պատասխանը եղաւ. «Լուրջ գործ մը պիտի ներկայացնենք»: Ենթադրեալ Պարոնեանը սրտցաւօրէն նկատեց, որ ժողովուրդը նման գործերու հաղորդ չէ, չի նախընտրէր զանոնք, նախընտրելի է իր գործերուն պէս կտորներ ներկայացնել: «Այդպէ՞ս կ'ուզեք, ժողովուրդ», հարցուց Վարուժը սրահի հանդիսականներուն: Հաւաքական «այո»-ին վրայ, Վարուժը յայտարարեց. «Դուք ձեր դրամները ինծի տուէք, ես ալ ձեզ ուզածնիդ չափ խնդացնեմ...»:

Առիթով մը, մտերմիկ գրոյցի մը պահուն իրեն յիշեցուցի ձայնասփիւռէն իր կատարած յանձնառու խոստումն ու Պարոնեան բեմադրելու առիթով «խնդացնեմ» յայտարարութիւնը: Դառն ժպիտով մը գլուխը շարժեց միայն...

Տագնապի տարիներուն Վարուժ վերադարձաւ իր «ծննդավարը»՝ Համազգայինի թատերախումբին. գործերը առաւելաբար եղան կատակերգական, սակայն ընդհանրապէս պահպանեց մակարդակ եւ բծախնդրի վարքագիծը: Թատերախումբէն հեռացողներուն տեղը հասցուց նորեր, սակայն ինք ալ գիտէր, որ պարտադրուած կացութեան մէջ, նախապատերազմեան տարիները գացած էին անվերադարձ:

Ափսոս, որ այդ տարիներուն ժապաւեններու նկարահանման արհեստագիտութիւնը չէր օժտուած այսօրուան դիւրամատչելի միջոցներով: (Զեմ գիտէր, թէ իր գործերը ժապաւենով նկարահանուած են): Այլապէս, Վարուժին իւրաքանչիւր գործ, նկարահանուելու պարագային, պիտի վերածուէր թատերական մնայուն դպրոցի, եւ ան իր անվերադարձ մեկնումէն ետք ալ պիտի մնար թատերական կեանքը յեղափոխողի դերին մէջ...

Հիմա, երբ ան մեկնած է արդէն, անոր ապրած ու պատճառած (երբեմն կռուական էր, բառին ազնիւ ու տեսակէտ պաշտպանողի իմաստով) տագնապներն ալ կ'անցնին մեր թատրոնի պատմութեան. սակայն կը մնայ անոր ստեղծած Գիծը, որուն գլխաւոր յատկանիշներն են՝ նորարարութիւն, որակ եւ արդի արուեստին հետ համընթաց վազք: Հետեւաբար անոր աստղը պիտի մնայ անմար, իսկ 60-ականներէն ասդին անոր գործերուն հետ քայլ պահողներ՝ դերասան, սեւ աշխատանք կատարող, վարչական թէ առհասարակ հանդիսատես, պիտի պահեն այն ուրախութիւնը, որ իրենց կեանքի ժամանակին մէջ ունեցած են Վարուժան հտընչեանի պէս արուեստագետներ: